

## **ՀՀ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՇՈՒՐՋ** **Գազիկ Տեր-Չարությունյան**

Քննարկելով հանրապետության նախորդ տարվա ձեռքբերումները՝ վերլուծական հանրությունում առանձնապես կարելի էր տեսնել «ՀՀ Ազգային անվտանգության ռազմավարություն» հիմնարար փաստաթղթի ստեղծումը: 2007-ի վերջին օրերին հաստատվեց նաև «ՀՀ Ռազմական դոկտրինը»: Այսպիսով, կարելի է ամրագրել, որ ներկայումս հանրապետությունում առկա են գործնականում օրենքի ուժ ստացած երկու հայեցակարգեր, որոնք կոչված են ուղենիշ հանդիսանալ Հայաստանի և Հայության անվտանգությունն ապահովող գործառույթներում: Միևնույն ժամանակ, գաղտնիք չէ (եւ առաջին հերթին այդ փաստաթղթերի ստեղծումը նախաձեռնողների համար), որ ՀՀ Ազգային անվտանգության ռազմավարությունը և Ռազմական դոկտրինը դեռևս զգալի չափով կրում են հռչակագրային բնույթ և չեն վերածվել հանրապետության արտաքին և ներքին քաղաքականությունը թելադրող իրական մեխանիզմի:

### ***Ժողովրդավարական համակարգից բխող խնդիրներ***

Անվտանգության տեսական դրույթները կիրառական հարթություն տեղափոխելու հետ կապված բարդություններն այսօր պայմանավորված են մի շարք գործոններով: Վերլուծաբանական հանրությունը նշում է պետական ապարատի աշխատակազմի ոչ այնքան բարձր տեսական պատրաստվածությունը և այն հանգամանքը, որ մեր նախարարությունների կառուցվածքը սկզբունքորեն հարմարեցված չէ նման բնույթի աշխատանքներ կատարելու համար: Քաղաքական ընտրանու առանձին շրջանակներում այդ առիթով երբեմն կարելի է լսել, թե մեզանում «պետությունը» կամ «իշխանությունը» միատարր հասկացություններ չեն, և որ առանձին պետական գերատեսչություններ ունեն անցանկալի առանձնահատկություններ և ի լրումն՝ ավելորդ անձնավորված են, ինչը չի նպաստում մեր ազգային շահերին ուղղված միասնական քաղաքականության մշակմանը և իրագործմանը:

Անշուշտ, մեր պետական համակարգը համապատասխանեցված է ժողովրդավարությունում ընդունված նորմերին և ստանդարտներին: Այդ համակարգի առանցքային դրույթներից են իշխանության տարբեր թելերի

ծեւավորումը եւ դրանց հավասարակշռումը. վերջինս պետք է խոչընդոտի պետությունում մեկ գերակայող ուժի առաջացմանը, ինչը դիտարկվում է որպէս հնարավոր բռնատիրոջան հաստատման նախապայման: Միեւնույն ժամանակ, նման համակարգը, իր արժանիքների հետ մեկտեղ, ինչ-որ չափով խոչընդոտում է քաղաքական կամքի կենտրոնի ծեւավորմանը եւ մասամբ սահմանափակում օպերատիվ որոշումներ ընդունելու հնարավորությունները:

Կան որոշակի հայեցակարգային բարդություններ նաեւ իշխանություն–հասարակություն հարաբերություններում: Մասնավորապէս, «միջին խավ» եւ «քաղաքացիական հասարակություն» հասկացությունները հայ հանրության համար բավական աղոտ եւ վիճելի են: Առաջինից կարծես թէ հետեւում է նաեւ «ցածր» եւ «բարձր» խավեր ծեւավորելու անհրաժեշտությունը: Իր հերթին, «քաղաքացիական հասարակության» վերաբերյալ դրոյթը, մասնավորապէս, ենթադրում է պետական համակարգում հասարակության «ինքնավարության» բարձր մակարդակ եւ անգամ «պետությունից անջատ» գործառույթներ: Այս առիթով նկատենք, որ այսօր պետություն–հասարակություն կապի նման թուլացումը, համաձայն միջազգային փորձագետների մի սովոր զանգվածի, բնավ չի հանդիսանում հանրության կազմակերպման ամենաօպտիմալ տեսլականը:

Սակայն վերոնշյալ հանգամանքներից բնավ չի հետեւում, թէ պետության եւ հասարակության կազմակերպման ժողովրդավարական համակարգը բացառում է ազգային-քաղաքական կամքի կենտրոնի ծեւավորումը, առանց որի անհնարին է ուժեղ պետություն եւ հանրություն ունենալը:

Ներկայիս հզոր երկրների գերակշռող մասն արդեն մի երկար պատմական ժամանակահատված հաջողակ գործում է ժողովրդավարական նորմերի շրջանակներում, իսկ որոշ գերհզոր թվացող ոչ ժողովրդավարական տերություններ փլուզվում են առաջին իսկ ներքին հարվածներից: Այս հարցի համալիր քննարկումը, անշուշտ, պահանջում է դիտարկել նաեւ, այսպէս կոչված, «երրորդ ուղի» ընտրած երկրների (Իրան, Իսրայել, Բելառուս եւ այլն) օրինակը: Սակայն վերադառնանք մեր հիմնախնդիրներին:

### ***Ինստիտուցիոնալ կառույցների մասին***

Ժողովրդավարական համակարգում պետության եւ հանրության տարբեր հատվածների տարանջատման հիմնախնդիրը, որպէս կանոն, հարթվում է, այսպէս կոչված, ինստիտուցիոնալ կառույցների (ԻԿ) միջո-

ցով, որոնց հիմնական նպատակներից է այդ հատվածներից մի համալիր ամբողջությունն ձեւավորելը: Այդ համատեքստում կարելի է փաստել, որ մեր հանրապետությունում ԻԿ-ների դերն այսօր այնքան էլ մեծ չէ:

Որպես ավանդական եւ համահայկական ԻԿ շարունակում է գործել Հայ Առաքելական եկեղեցին (որն իր գործառույթներում պետք է մասամբ ընդգրկի նաեւ գաղափարախոսական ոլորտը): Արցախյան ազատագրական պայքարի արդյունքում յուրահատուկ ինստիտուցիոնալ դերակատարում է ձեռք բերել Պաշտպանության նախարարությունը. զարմանալի չէ, որ ՀՀ Ազգային անվտանգության ռազմավարության փաստաթուղթը ստեղծվել է հենց ՊՆ-ում: Քաղաքական, ազգային-գաղափարախոսական ոլորտում ԻԿ-ի վերածվելու հնարավորություններ ունեն ՀՀԿ-ն եւ ՀՅԴ-ն: Հանրությունում որոշակի ոգեւորություն է առաջացրել նաեւ Սփյուռքի խնդիրներով զբաղվող նախարարության ստեղծման մասին իշխանությունների խոստումը, ինչը թույլ կտա լրջորեն զբաղվել համաշխարհային Հայության կազմակերպման եւ անվտանգության խնդիրներով:

Զպետք է մոռանալ նաեւ կորուստների մասին, որոնց շարքում առաջինը Գիտությունների ազգային ակադեմիան է. այսօր ԳԱԱ-ն ծանր իրավիճակում է, այն չի կատարում ազգային անվտանգության տեսակետից առավել քան կարելու գիտատեխնոլոգիական կենտրոնի իր ֆունկցիաները եւ գլխավորապես փորձում է լուծել սեփական գոյապահպանման խնդիրը:

Միեւնույն ժամանակ, հարկ է նշել, որ վերլուծական հանրությունում գերակայում է այն կարծիքը, թե առանձին ԻԿ-ների դերակատարման բարձրացումը կամ դրանց թվի արհեստական մեծացումը դժվար թե որակապես բարելավի ոչ այնքան բարվոք իրադրությունը պետության եւ հանրության կազմակերպման ոլորտում: Ոչ պաշտոնական հարցումները պետական եւ քաղաքական ընտրանու շրջանակներում վկայում են, որ վերոնշյալ խնդիրների լուծումը, թերեւս, հնարավոր է միայն այն պարագայում, եթե հանրապետությունում, որպես լիարժեք համակարգող խորհրդատվական-վերլուծական կառույց, սկսի գործել Ազգային անվտանգության խորհուրդը (ԱԱԽ): Փորձագիտական հիմունքներով կազմակերպված մեծ մարմինը, ինչպես վկայում է միջազգային փորձը, ունի բոլոր հնարավորությունները ոչ միայն իրական հարթությունում կիրառել ազգային անվտանգության ոլորտների (ռազմաքաղաքական, սոցիալ-տնտեսական եւ տեղեկատվական) տեսական դրույթները, այլեւ վերածվել այն առանցքային ինստիտուցիոնալ կառույցին, որը համախմբելով մնացյալ ԻԿ-ները՝ կհաղորդի նրանց գործունեությանը գերարդյունավետ, այսպես կոչված՝ սիներգետիկ բնույթ:

## **ԹՈՒՐՔԻԱՅԻ ԿՐՈՆԱՓՈԽ ԶԱՅԵՐԻՆ ԱՌՆՉՎՈՂ ԶԱՐՑԵՐ Ռուբեն Մելքոնյան**

Խոսելով Թուրքիայի կրոնափոխ հայերի մասին՝ հաճախ բախվում ենք նրանց ներկայիս կարգավիճակի սահմանման վիճահարույց եւ, միեւնույն ժամանակ, բազմաշերտ խնդրին: Թուրքիայի այլակրոն հայերը ծուլման տարբեր աստիճաններում գտնվող մարդիկ են, որոնցից ոչ բոլորն ունեն մաքուր հայկական էթնիկ նկարագիր, եւ նրանց պայմանականորեն կարելի է բաժանել երկու խմբի:

ա. էթնիկապես մաքուր հայեր, որոնք պահել են ազգային եւ կրոնական (քրիստոնեական) սովորույթների, տոների, ծեսերի առանձին տարրեր, մոռացել են լեզուն, բայց նրանց մոտ դեռեւս կա, թեկուզեւ քողարկված ձեւով, հայկական ինքնագիտակցության որոշակի տոկոս: Նրանք գաղտնի շարունակում եւ փորձում են պահպանել այս ամենը, ձգտում դա փոխանցել իրենց սերունդներին: Այս խումբը պայմանականորեն անվանում ենք «ծպտյալ հայեր»:

բ. Զայերի սերունդներ, որոնց նախնիները ստիպված իսլամացել են. նրանց գերակշիռ մասը գիտի եւ նույնիսկ ընդունում է դա: Սակայն կտրված լինելով հայկական միջավայրից՝ ի տարբերություն ծպտյալ հայերի, նրանք անհամեմատ ավելի քիչ են պահպանել ազգային-կրոնական սովորույթների տարրերը եւ ոչ միայն քրդախոս են, արաբախոս կամ թրքախոս, այլեւ մշակութային առումով եւս քրդացել, թուրքացել են: Այս խմբի մեջ, օրինակ, չեն պահպանվել ներքին ամուսնությունները, ինչը հանգեցրել է նաեւ էթնիկապես նրանց ուժացմանը: Այս նույն խմբում կարելի է տեղավորել նաեւ մարդկանց, ովքեր ունեն հայկական ծագման որոշակի տոկոս, ում տատը կամ պապը հայ է եղել, եւ այդ հիշողությունը պահպանվել է նրանց մեջ:

Այս բոլոր խմբերին պայմանականորեն տալիս ենք «այլակրոն հայեր» անվանումը՝ քաջ իմանալով դրանց միջեւ առկա էական տարբերությունները:

Պետք է հստակ արձանագրել, որ ներկայիս Թուրքիայի կրոնափոխ հայության գերակշիռ մեծամասնությունն իսլամ է ընդունել կյանքի եւ մահվան միջեւ ընտրություն կատարելու պարտադրանքից: Այժմ Թուրքիայում բնակվող իսլամացած հայությունն առավելապես ձեւավորվել է հետեւյալ խմբերից.

ա. Հայոց ցեղասպանության ժամանակ արտաքուստ իսլամ ընդունած հայեր,

բ. ցեղասպանության ժամանակ առեւանգված եւ այնուհետեւ թուրքերի կամ քրդերի հետ ամուսնացած հայ կանայք ու աղջիկներ,

գ. ցեղասպանության ժամանակ որդեգրված հայ երեխաներ,

դ. որոշ թվով հայեր, ովքեր ապաստան են գտել հարեւանների կամ այլ մարդկանց մոտ,

ե. սահմանափակ թվով հայ արհեստավորներ եւ բացառիկ մասնագետներ, որոնք իսլամացել են իշխանության իմացությամբ<sup>1</sup>:

Այս բոլորին կապող ընդհանուր եւ կարեւոր հանգամանքներից է մահվան սպառնալիքով իսլամ ընդունելը: Այս մարդիկ ունեն խեղված հոգեկան եւ հոգեբանական վիճակ, ապրում են վախի պայմաններում, ունեն երկու ինքնություն՝ արտաքին եւ ներքին աշխարհների համար: Համապատասխան մասնագետները ցեղասպանության վերապրածների մեջ ուսումնասիրում են հոգեբանական տարբեր խնդիրների ի հայտ գալու փաստը, սակայն առանձին ուսումնասիրության է կարոտ դիմախեղված հայերի հարցը:

\* \* \*

Թուրքիայում իրենց գոյությունը պահպանած եւ ուժացման տարբեր մակարդակներում գտնվող հայերի մեջ էթնիկ եւ կրոնական ինքնագիտակցության տարբերի գնահատման համար պարտադիր եւ կարեւորագույն պայման է՝ հստակ պատկերացնել ու հաշվի առնել այն միջավայրը, որտեղ ապրում են բռնի եւ երբեմն միայն արտաքուստ իսլամացված մեր ազգակիցները: Թուրքիայում, ուր հայ կամ ընդհանրապես ոչ մուսուլման լինելն այսօր էլ ծայրահեղ վտանգավոր է, դասական հայկականություն պահպանելը խիստ դժվար է, հատկապես՝ անհամեմատ ավելի հետամնաց ու հետադեմ արեւելյան շրջաններում: Այսինքն՝ այլակրոն հայերին ինչ-որ տեղ «մեղադրելուց» եւ հայ լինելու հայաստանյան չափանիշների մեջ տեղավորել-չտեղավորելուց առաջ պետք է հաշվի առնել այս ամենը:

Հայկական ինքնագիտակցության տարբեր շերտերի պահպանման խոստում ապացույցներից կարող է լինել այն փաստը, որ պատեհ առիթի դեպքում բռնությամբ եւ հարկադրանքով գրեթե լիովին ուժացված հայերը վերադառնում կամ գոնե փորձում են վերադառնալ իրենց արմատներին:

<sup>1</sup> Հոդվածում փորձել ենք կանգ առնել հիմնականում Հայոց ցեղասպանության տարիներին կրոնափոխ եղած հայերի խնդրի վրա, ուստի գիտակցաբար չենք ընդգրկում ավելի վաղ իսլամացվածներին, օրինակ՝ համշենահայերին:

Դրա վառ օրինակն է տարբեր տարիներին պաշտոնապես արձանագրված կրոնադարձությունը: Ընդ որում՝ կրոնադարձվում են տարբեր սերունդների պատկանող հայեր, ինչը նրանց մեջ առկա հիշողության պահպանման մասին է խոսում: Ասվածը հիմնավորելու համար ներկայացնենք Թուրքիայի այլակրոն հայության հետ կապված որոշ դրվագներ:

Այսպես, անցյալ տարվա ապրիլին «Ֆրանս-24» հեռուստաալիքը պատրաստել էր ընդարձակ ռեպորտաժ՝ նվիրված Թուրքիայի ծայրյալ հայերին: Բացի տարբեր մասնագետներից, ռեպորտաժում ներկայացվում էր նաև ծայրյալ հայերի մի ընտանիք, որի զավակներից մեկը, ապրելով Ստամբուլում, պաշտոնապես կրոնադարձվել է՝ ընդունելով իր պապերի կրոնը՝ քրիստոնեությունը: Ավելին, նա ամուսնացել է հայաստանցի աղջկա հետ, իսկ որդուն ուղարկել հայկական դպրոց եւ ներկայումս որդուց փորձում է հայերեն սովորել: Ադրյամանի շրջանի գյուղերից մեկում մնացած նրա հարազատներն իրենց շրջապատող միջավայրի պատճառով այդքան էլ բացահայտ չեն կարողանում ինքնադրսեւորվել: Նրանք խոստովանում են, որ առայսօր հալածվում են ինչպես շրջապատում, այնպես էլ պետական հաստատություններում, օրինակ՝ դպրոցում եւ այլուր: Եվ սա՝ չնայած այն բանին, որ նրանք պաշտոնապես գրանցված են որպես մուսուլմաններ: Բավական հետաքրքիր է ընտանիքի տարեց մոր խոստովանությունը, որ իրենք, ճիշտ է, հաճախում են մզկիթի վերածված նախկին հայկական եկեղեցի եւ նամազ անում, բայց իրենց աղոթքով դիմում են Հիսուս Քրիստոսին:

Թուրքական «Յենի Աթթուել» ամսագրի 2007թ. նոյեմբերի համարում ներկայացված են Թուրքիայի տարբեր վայրերի իսլամացված հայերի կամ հայկական արմատներ ունեցող խառնածինների պատմություններ, որոնցից մեջբերենք մի քանիսը:

Քյահթայում ապրող Բեքիր Ջանթեքինը նրանցից է, ով ազատորեն հայտարարում է իր իրական ծագման մասին եւ վերընդունել է քրիստոնեություն: Նա իր երեխաներին 2007թ. ամռանը կնքել է Մարմարա ծովում գտնվող Քընալը կղզու հայկական եկեղեցում, որտեղ է գտնվում նաև Պոլսո Հայոց պատրիարքի ամառային նստավայրը: Լրագրողի այն հարցին, թե երբվանից է իրեն հայ զգում, Բեքիրը պատասխանել է. «Եթե անգամ այդ մասին չիմանանք էլ, ստիպողաբար տեղեկացնում են: Երբ բոլորն իմ հետեւից ասում են, թե հայ եմ, ինչո՞ւ քրիստոնյա չլինեմ որ: Ես այն եմ, ինչ որ իրականում կամ»: Իսկ Բեքիր Ջանթեքինի եղբայրները նախընտրել են մուսուլման մնալ եւ չեն էլ թաքցնում, որ նեղացած են իրենց եղբորից այդ քայլի համար, ինչին նա պատասխանում է, որ Քյահթայի պայմաններում նրանք միգուցե իրավացի են:

Խոսելով մոսուլմանների եւ ծպտյալ հայերի ամուսնությունների խնդրի մասին՝ նույն վայրում ապրող մեկ այլ հայ ներկայացնում է շատ կարեւոր մի փաստ, համաձայն որի՝ ծպտյալ քրիստոնյա հայերը հիմնականում իրար մեջ են ամուսնանում: Նույն հողվածում հանդիպում ենք այն մտքին, թե կան նաեւ կրոնադարձված մարդիկ, ովքեր խուսափում են իրենց անունները նշել՝ վախենալով շրջապատի ճնշումից:

Չափազանց հետաքրքիր մի փաստ ենք արձանագրել նաեւ ինտեր-նետային ֆորումներից մեկում, որտեղ ասվում է, որ Մոսկվայում աշխատող թուրք շինարարների մեջ կան ծպտյալ հայեր, որոնք ճաշելուց առաջ խաչակնքում են հացը, իսկ եթե նրանց միջավայրում այդ պահին լինում են օտարներ, նրանք այդ նույնն անում են հացը խաչածեւ չորս մասի բաժանելով: Ընդհանրապես պետք է ասել, որ, իրոք, ծպտյալ հայերը գործածում են որոշ տարբերանշաններ, որոնք գաղտնի են պահվում: Նույնիսկ խոսվում է նրանց շրջանում հայկական անձնանունների ներքին օգտագործման մասին: Ծպտյալ հայերը հիմնականում միմյանց ճանաչում են, եւ բազմաթիվ են փաստերը, որոնք ապացուցում են սա:

\* \* \*

Չայտնի է, որ հայ լինելու կարեւոր ցուցիչ է մայրենի լեզվի տիրապետումը: Միեւնույն ժամանակ, ակնհայտ է, թե ներկայումս հայոց լեզվի հիմնախնդիրն ինչ մեծ ծավալներ է ընդգրկել աշխարհասփյուռ Չայության շրջանում: Խոսելով Թուրքիայի այլակրոն հայերի մեջ հայերենի պահպանման մակարդակի մասին՝ կարելի է նշել, որ մինչեւ հիմա էլ նրանք գործածում են հայերեն առանձին բառեր: Օրինակ՝ Վան քաղաքում ապրող մի դերձակ, որը զգուշությունից ելնելով բացահայտորեն չխոստովանեց իր ծագման մասին, մեզ տեղեկացրեց, որ ներկայումս էլ իրենց գյուղում, որը գտնվում է Վանա լճի ափին, հատկապես տարեցներն օգտագործում են *հարսիկ*, *տղա*, *աղջիկ* եւ այլ բառեր:

Կարեւոր մի փաստ եւս. Արեւմտյան Չայաստանի մի շարք վայրերում, ծպտյալ եւ իսլամացված հայերի շրջանում անցյալ տարի տարածվել էր թուրքերենով հայերենի ինքնուսույց-դասագիրքը: Վանում, Մուշում եւ այլուր բազմաթիվ իսլամացված, ծպտյալ հայեր մեծ ոգելորոթյամբ, միեւնույն ժամանակ՝ փոքր-ինչ գաղտնի, մեզ ցույց էին տալիս այդ գիրքը, որը նրանց հնարավորություն էր տալու սովորել իրենց մայրենին: Սրանք վկայում են, որ հայրենաբնակ շատ հայերի մեջ վառ է նաեւ մայրենի լեզվին տիրապետելու ցանկությունը: Սակայն առնվազն իրատեսական չէ ծպտյալ կամ իսլամացված հայերից, որպես հայ լինելու գրավական, պահանջել հայերենի լավ իմացություն այն դեպքում, երբ Ստամբուլի

հայկական համայնքի մեծ մասը չի տիրապետում հայերենին այն աստիճան, որ եկեղեցուն քարոզը կարդացվում է թուրքերեն:

Ինչպես նշեցինք, Թուրքիայում այսօր կան մեծ թվով խառնածիններ կամ հայկական ծագման որոշակի տոկոս ունեցող մարդիկ, որոնց խնդիրը բազմաշերտ է: Կան մարդիկ, ովքեր հպարտությամբ են խոստովանում, որ ունեն նաեւ հայկական ծագում. օրինակ՝ «Յենի Աքթուել» հանդեսի վերոնշյալ հոդվածաշարում Մարդինի ավագանի Ասլան Քերեւլին ասում է, որ հայրական տատը՝ Նազոն, հայուհի է. «Տատս աքսորի ժամանակ 3-4 տարեկան է եղել, Բիթլիսի կողմից է եկել եւ ապաստան գտել մերոնց մոտ: Յետո, երբ մեծացել է, պապիս հայրը նրան ամուսնացրել է պապիս հետ: Տատիս նմանները շատ կան այստեղ»<sup>2</sup>: Սակայն, միեւնույն ժամանակ, հանդիպում են խառնածիններ, որոնք տարբեր դրդապատճառներով կտրականապես ժխտում են իրենց հայկական ծագումը, եւ հետաքրքիր է, որ ըստ տարբեր աղբյուրների՝ նրանց շարքում կան նույնիսկ ծայրահեղ ազգայնական «Գորշ գայլեր» կազմակերպության անդամներ:

Որպես վերջաբան՝ ավելորդ չէ այստեղ մեջբերել Թուրքիայի իսլամացված հայության խնդրին խորությամբ քաջատեղյակ եւ այդ ուղղությամբ գործնական քայլեր արած հանգուցյալ Յրանտ Դինքի կարծիքը. *«Թուրքիոյ մէջ այսօր հազարաւորներ կան, որ քաջութիւն ունին հրապարակաւ արտայայտուելու, գիրքեր ու յօդուածներ գրելու, թէ իրենց պապերը հայ էին: Թուրքիոյ մէջ հիմա այս ուղղութեամբ շարժում կայ եւ ես ըսեմ, որ ապագայ հայ կեանքի ամենամեծ եւ ամենայուսալի աշխատանքներէն մէկը կրնայ դառնալ անիկա: Եթէ Թուրքիան Եւրոմիութեան անդամ դառնայ օր մը, չեն սխալիր, եթէ հայութիւն առնուազն երկու միլիոն եւս շատնայ, Թուրքիոյ մէջ գոյութիւն ունեցող իսլամ հայերու թիւով: Ինձի համար շատ կարեւոր է այս հարցով աշխատիլ եւ գտնիլ այդ կորսուածները, ողջնցնել այդ մեռածները: Շատ կարեւոր է գտնել այդպիսի հայ մը եւ իրեն տալ իր հայութիւնը»:*

---

<sup>2</sup> Ի դեպ, խոսելով Թուրքիայում խառնամուսնությունների մասին՝ արժե անդրադառնալ նաեւ ժամանակակից գործընթացներին, երբ տարբեր իրողությունների ազդեցության տակ Ստամբուլի հայկական համայնքում արձանագրվում է խառնամուսնությունների աճ: Սակայն, միեւնույն ժամանակ, պետք է արձանագրել, որ այս երեւոյթը ավելի վաղ եւս նկատվել է հանրապետական Թուրքիայի հայ համայնքում:

## **2007-Ի ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՆՇԱՆԱԿԱԼԻ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ Դավիթ Յովհաննիսյան**

Ցանկացած վերլուծաբանի կողմից իրադարձությունների կարեւորումը պայմանավորված է նրա դիրքորոշմամբ, իսկ դիրքորոշումը ձեւավորվում է երկու հիմնական կատեգորիաների՝ ժամանակի եւ տարածության ազդեցությամբ: Հասկանալի է, որ տեսականորեն հայաստանցի փորձագետի համար կարող են շատ հետաքրքիր լինել Վենեսուելայի նախագահ Ուգո Չավեսի քաղաքական հայացքները, նրա ընդունած որոշումները, հարաբերությունները Միացյալ Նահանգների, Իսպանիայի եւ Կուբայի ղեկավարների հետ: Սակայն առաջին հայացքից դրանք ՀՀ ոչ արտաքին եւ ոչ էլ ներքին քաղաքականության հետ կապ չեն կարող ունենալ, ուստի՝ ակտուալ չեն: Բայց այդպես է թվում միայն առաջին հայացքից:

Բանն այն է, որ գործընթացների փոխկապակցվածությունը ներկայիս տեղեկատվական համակարգերի շնորհիվ այնքան մեծ է դարձել, որ նույնիսկ Հայաստանից այդքան հեռու գտնվող երկրում կատարվող դեպքերը եւ զարգացող գործընթացներն իրական ազդեցություն ունեն նաեւ մեզ վրա, ընդ որում այդ ազդեցությունն ունի տարբեր դրսեւորումներ՝ արժեքային, գաղափարական, աշխարհաքաղաքական եւ այլն: Եթե վերը ձեւակերպված միտքը հիմնավորման կարիք ունի, ապա բավական է հիշել միայն երկու փաստ՝ Վենեսուելան եւ Բելառուսը լայն տնտեսական համագործակցության ծրագիր են իրականացնում (հիշեցնենք, որ Բելառուսը ԱՊՀ եւ ՀԱՊԿ անդամ է, այսինքն՝ այն համագործակցության եւ անվտանգության համակարգերի, որոնց անդամն է նաեւ Հայաստանը), Վենեսուելան եւ Իրանը, բացի համագործակցությունից բազմաթիվ միջազգային կազմակերպություններում, այդ թվում՝ ՄԱԿ-ում եւ ՕՊԵԿ-ում, նույնպես իրականացնում են լայնածավալ տնտեսական համագործակցություն, իսկ Իրանը մեր անմիջական հարեւանն է:

Այս առումով բավական դժվար է առանձնացնել այն բոլոր կարեւոր իրադարձությունները, որոնք տեղի են ունեցել անցյալ՝ 2007թ. ընթացքում, քանի որ դրանք բոլորն էլ այս կամ այն չափով ազդում են մեզ վրա եւ առնչվում մեզ հետ: Անշուշտ, ամենաէական չափանիշը այն ազդեցությունն է, որ այդ իրադարձություններն ունեցել են Հայաստանի, հայաստանցիների եւ հայության հետ կապված էական խնդիրներում:

Այս տեսակետից, իր հետագա դերակատարության եւ ազդեցության առումով, հավանաբար, ամենանշանակալիցը Կոսովոյի հարցի ակտուալացումն էր: Միացյալ Նահանգների նեոպահպանողական ղեկավարության եւ նրա եվրոպական գործընկերների ջանքերը բալկանյան հանգույցներից վերջինի լուծման ուղղությամբ նշանավորում են «Ազատության սահմաններ» լայնորեն գովազդված ծրագրի ավարտական փուլը: Կոսովոյի անկախության արձանագրումը եւ ճանաչումը համաշխարհային քաղաքականության տեսանկյունից նշանակում է «սառը պատերազմի» ավարտից հետո եվրոպայի քարտեզի վերջնական ձեւավորում, որից հետո ձեռք բերված քաղաքական եւ տնտեսական համասեռությունն ավանդականորեն ընկալվող անվտանգության համակարգի առումով հստակ է դարձնում եվրամիության հեռանկարները (խոսքն, անշուշտ, չի վերաբերում միգրացիոն գործընթացների արդյունքում ստեղծված հիմնախնդիրներին):

Մյուս կողմից՝ Կոսովոյի հիմնահարցի նշված եղանակով լուծումը «երեք ժուլերի համակարգ» ամերիկյան ծրագրի կարելու տարրերից է:

Այն, որ Կոսովոյի անկախության ձեռքբերման դեպքում շատ բան է փոխվելու մյուս հակամարտությունների հետ կապված մոտեցումներում՝ փաստ է, որքան էլ որ տարբեր արեւմտյան երիտասարդ դիվանագետներ հայտարարեն, թե Կոսովոյի դեպքն ունիկալ է: Իրականում ոչ մի ունիկալություն էլ չկա, տարբերվում են միայն հակամարտություններում ուղղակիորեն չընդգրկված ուժերի դասավորվածությունը եւ հարաբերակցությունը: Այս տարբերությունն ընդգծում է նաեւ բավական հեղինակավոր ադրբեջանցի քաղաքագետ Սեյիդովը, որի տեսակետից Կոսովոյի հիմնախնդրի առանձնահատկությունն այն է, որ «հակամարտության անմիջական կողմ է հանդիսանում ՆԱՏՕ-ն՝ ամենակարող եւ այսօր այլընտրանք չունեցող ռազմաքաղաքական կազմակերպությունը: Միջազգային իրավունքի կիրառումը Կոսովոյի դեպքում չի կարող իրականացվել առանց հյուսիսատլանտյան դաշինքի հեղինակությանը հարված հասցնելու, եւ Արեւմուտքի համար միայն այս փաստարկը բավական է, որպեսզի միջազգային կանոններից բացառություն կատարվի»:

Գանք Ռուսաստանին, որտեղ եւս անցած տարվա ընթացքում բավական լուրջ տեղաշարժեր են տեղի ունեցել: Վերջին տասնամյակներին Ռուսաստանը երբեք այնքան կայուն եւ վստահ չի եղել, որքան անցած տարվա ընթացքում, որի սկիզբն արդեն նշանավորվեց ՌԴ նախագահ Վ.Պուտինի մյուսխենյան ճառով: Ֆինանսատնտեսական եւ սոցիալական կայունությունը ներկայումս հնարավորություն է տալիս Կրեմլին բազմաչափ սակարկությունների մեջ մտնել աշխարհի ուժեղների հետ:

Նավթագազային եկամուտներն այսօր թույլ են տալիս Մոսկվային թարմացնել իր ռազմական և քաղաքական զինանոցները, որի հիմնական նպատակն է՝ վերականգնել Ռուսաստանի ազդեցությունն իր կենսական շահերի գոտիներում: Մոսկվան այսօր ավելի ճկուն է իր քաղաքական նպատակներին հասնելու միջոցներում. այն օգտագործում է թե՛ իր էներգետիկ ռեսուրսներից մյուսների կախվածությունը, թե՛ այլ պետությունների տարածք ֆինանսական և տնտեսական թափանցման հնարավորությունները և թե՛ ռազմական ներկայությունը: Այս վերջին գործոնի օգտագործման տեսանկյունից հատկանշական է ռուսական նավատորմի հայտնվելը Միջերկրական ծովում, ինչը տեղի չէր ունեցել Խորհրդային Միության փլուզումից ի վեր: Այս քայլը Խորհրդանշում է Ռուսաստանի ռազմաքաղաքական ներկայությունը երկրագնդի ռազմավարական առումով, թերևս, ամենակարեւոր տարածաշրջանում և ակնարկում է այս երկրի՝ «երեք ծովերի համակարգ» ամերիկյան ծրագրի իրականացմանն ընդդիմանալու վճռականության մասին:

Ռուսաստանի կայունությունը և քաղաքականության շարունակականությունն ապահովող քայլ է համարվում Դ.Մեդվեդեւին պաշտոնակաճորեն «թագաժառանգ» նշանակելը՝ մի քայլ, որը, չնայած նախագահ Վ.Պուտինի բարձր վարկանիշին, հենց Ռուսաստանի ներսում միանշանակ չի ընկալվում, հատկապես այն բանից հետո, երբ պարզվեց, որ Պուտինը կարող է զբաղեցնել երկրի վարչապետի պաշտոնը:

Ինչեւէ, Ռուսաստանը ներկայումս կարողանում է հաջողությամբ հակազդել իրեն մեկուսացնելու և շրջանցելու բոլոր ծրագրերին, ինչն արտահայտվում է, օրինակ, Կասպյան ավազանի նավթային և գազային պաշարների համար պայքարում ռուսական ծրագրերի բարեհաջող ընթացքով:

Ռուսաստանի ազդեցության աճը հատկապես լուրջ է իրեն զգալ տալիս մեր հարեւան պետությունների՝ Թուրքիայի, Իրանի և Վրաստանի հետ կապված հիմնախնդիրներում:

Անցած՝ 2007թ. նոյեմբերի դեպքերից հետո Վրաստանում ստեղծված լարված ներքաղաքական իրավիճակը հնարավոր եղավ մեղմացնել միայն նախագահ Մ.Սահակաշվիլու՝ արտահերթ նախագահական ընտրություններ անցկացնելու վերաբերյալ որոշմամբ (ամերիկյան Խորհրդականների շնորհիվ), ինչը նշանակում էր, որ «վարդերի հեղափոխությունից» հետո առաջին անգամ երկրում ձեւավորվել է իշխանություններին հակադրվող լուրջ ուժ: Անշուշտ, վրացական ընդդիմությունը չափազանց խայտաբղետ է, և նրա մաս կազմող ուժերը՝ իրարից տարբերվող, սակայն նրանց գործողությունների շնորհիվ պետությունն ավելի խոցելի է դառնում, ինչը

հնարավորություն է տալիս ռուսներին վերջին ժամանակաշրջանում առաջին անգամ փորձել ամրապնդել իրենց ազդեցությունն այս երկրում: Վրաստանը Ռուսաստանի համար չափազանց կարեւոր է ոչ միայն բոլորին հասկանալի եւ բազմիցս նշված պատճառներով՝ ԱՊՅ եւ ՅԱՊԿ ամբողջականացում, կոմունիկացիոն ընդհատված ուղիների վերականգնում, ՆԱՏՕ-ի ընդլայնման կասեցում եւ այլն, այլ նաեւ սեւծովյան ռազմավարական դիրքերի վերականգնման տեսակետից: Եթե Վրաստանը ՆԱՏՕ-ի միջանտուրայամբ կարողանում է վերականգնել իր տարածքային ամբողջականությունը, ապա Սեւ ծովը դառնում է գրեթե ամբողջովին նատոյական, ինչը զգալիորեն թուլացնում է Ռուսաստանի ռազմավարական դիրքը եւ նվազեցնում «երեք ծովերի համակարգի» ծրագրին վերջինիս դիմակայելու հնարավորությունները:

Ինչ վերաբերում է Իրանին, ապա վերջինս, չնայած Իսրայելի եւ Միացյալ Նահանգների հրեական լոբբիի դիմադրությանը, ԱՄՆ Ազգային հետախուզական խորհրդի գնահատականի հրապարակումից հետո (համաձայն որի՝ Թեհրանը դեռեւս 2003թ. աշնանը կասեցրել էր միջուկային զենքի ստեղծման ծրագիրը) բավական լավ հնարավորություններ է ձեռք բերել իր միջուկային ծրագրի շուրջ ստեղծված իրավիճակից առանց մեծ կորուստների դուրս գալու համար: Ներկայումս, երբ Միացյալ Նահանգներում ծավալվում է անկանխատեսելի նախագահական մրցավազք, կարելի է գրեթե բացառել ռազմական բախման հնարավորությունը: Սա նշանակում է, որ Իրանը հնարավորություն է ստանում ավարտին հասցնել իր միջուկային ծրագրի առաջին փուլը, որը, սակայն, չի ներառում ուրանի հարստացման տեխնոլոգիայի ամբողջականացումը: Հետաքրքիր եւ հատկանշական է, որ այս պայմաններում ռուսական աղբյուրները թույլ են տալիս մի չափազանց մեծ նշանակություն ունեցող ինֆորմացիայի արտահոսք: Այն վերաբերում է Իրանի եւ ՌԴ միջեւ արդեն գրեթե կնքված պայմանագրին՝ Թեհրանին հինգ դիվիզիոն S-300 հրթիռային համալիրներ վաճառելու վերաբերյալ: Հակաօդային պաշտպանության նման հնարավորությունները (եթե պայմանագիրն, իհարկե, կնքվի) կարող են թույլ տալ Իրանին շատ ավելի վստահորեն բանակցել իր ընդդիմախոսների հետ:

Թուրք-ամերիկյան հարաբերությունները 2007թ. ընթացքում շարունակում էին մնալ լարված, ինչի ոչ ուղղակի վկայությունը եղավ այն, որ ամերիկյան Կոնգրեսի արտաքին հարաբերությունների հանձնախումբն ընդունեց Ցեղասպանության վերաբերյալ 106-րդ բանաձեւը: Միացյալ Նահանգները եւ Թուրքիան տարբեր լծակներ են օգտագործում միմյանցից զիջումներ պոկելու համար: Թուրքիան չափազանց կոշտ արտահայ-

տություններ էր թույլ տալիս իրեն՝ Իրաքում ամերիկյան քաղաքականության հասցեին, ինչը հասկանալի է, քանի որ Անկարան, բացի քրդական վտանգից պաշտպանվելը, բավական մեծ հույսեր ունի իրաքյան Քուրդիստանում գտնվող նավթի պաշարների կամ գոնե դրանց մի մասի նկատմամբ իր հսկողությունը հաստատելու հետ կապված: Այս հակասությունների ուղղակի արտահայտությունը եղան թուրքական բանակի գործողություններն Իրաքի տարածքում, ինչն ամերիկյան քաղաքական ղեկավարությունը ստիպված էր հանդուրժել՝ զնահատելով Թուրքիայի նշանակությունը տարածաշրջանում եւ նրա հնարավորությունները ամերիկյան ծրագրերի իրականացմանը դիմադրելու տեսակետից:

Հակասությունները Իրաքով չեն սահմանափակվում: Թուրքական քաղաքական եւ ռազմական ղեկավարությունը կտրականապես դեմ է արտահայտվել Սեւ ծովում ամերիկյան ռազմական ներկայության հնարավորության վերաբերյալ:

Միացյալ Նահանգներին մտահոգում են արագորեն զարգացող ռուս-թուրքական քաղաքական, ռազմական եւ տնտեսական հարաբերությունները: Վաշինգտոնյան քաղաքական ծրագրավորման մասնագետները թուրք-ամերիկյան հարաբերություններում իրավիճակը շտկելու առումով, ի թիվս այլ քայլերի, կարելի էր են նաեւ հայ-թուրքական հարաբերությունների կարգավորումը:

2007թ. ընթացքում, ինչպես եւ միշտ, տեղի են ունեցել բազմաթիվ մեծ եւ փոքր իրադարձություններ, որոնց հիմնական տրամաբանությունը կարելի է բնորոշել հետեւյալ կերպ. աճել է լարվածությունը, դաշինքների տրամաբանությանը վերադառնալու միտում է նկատվում, ինչը, սակայն, դեռեւս լուրջ դիմադրության է հանդիպում, կասեցվել են կայունությունն ապահովող մի քանի պայմանագրեր, իրենց մասին նորից խոսել են տալիս ձախ սոցիալիստական գաղափարախոսության տարբեր մոդիֆիկացիաներ: Սակայն, ըստ մեզ, ամենակարեւոր եւ լուրջ հետեւանքներ ունեցող իրադարձությունները եւ գործընթացները վերը նշվածներն էին:

Հայաստանի արտաքին քաղաքական նշանակության աճի առումով չափազանց կարեւոր են Իրան-Հայաստան գազամուղը, ուրանի արդյունահանման եւ նոր ատոմակայանի կառուցման ծրագրերը, որոնց շնորհիվ մեր երկիրը կարող է մնալ այս տեխնոլոգիային տիրապետող սակավաթիվ պետությունների շարքում:

## 2007-Ի «ԱՆՏԵՍՎԱԾ» ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ Սեւակ Սարուխանյան

*«Foreign Policy» ամերիկյան հեղինակավոր վերլուծական հանդեսը 2007թ. իր վերջին համարի կենտրոնական նյութը նվիրեց անցած տարի տեղ գտած այն տասը կարեւոր զարգացումներին եւ իրադարձություններին, որոնք ինչ-ինչ պատճառներով դուրս մնացին միջազգային լրատվական եւ վերլուծական հոսքից: Եվ սա այն պարագայում, երբ ուշադրությունից զերծ մնացած մի շարք զարգացումներ կարող են նշանակալի եւ ազդեցիկ դեր խաղալ միջազգային քաղաքական հետագա զարգացումներում: Ստորեւ հարկ ենք համարում անդրադառնալ ամերիկյան հանդեսի նշած իրադարձություններից մի քանիսին:*

### **Միջազգային կիբեռպատերազմների սկիզբը**

2007 թվականը կհիշվի որպես իսկական կիբեռպատերազմների սկիզբն ազդարարող տարեթիվ: Հատկանշական է, որ տարվա ընթացքում համաշխարհային ինտերնետային եւ ծրագրային ցանցում մղվող պատերազմում դրական ձեռքբերումներով աչքի ընկան Ռուսաստանը եւ Չինաստանը, այն պարագայում, երբ Արեւմուտքը քայլեր էր ձեռնարկում ռուսական եւ չինական դիրքերի ամրապնդումը խափանելու ուղղությամբ: Այսպես, ապրիլի վերջին եվրոպական եւ ամերիկյան գործակալությունները եւ կառույցներն անակնկալի եկան, երբ ռուսական հաքերները մի քանի օրվա ընթացքում ամբողջովին ոչնչացրին էստոնիայի բավական ժամանակակից եւ զարգացած էլեկտրոնային-տեղեկատվական համակարգը: Մի քանի օրում, որպես հակազդեցություն Տալլինի հակառուսական քաղաքականության, հիմնովին վերացվեցին կամ վերահսկողության տակ առնվեցին էստոնական տեղեկատվական գործակալությունների, նախարարությունների, այդ թվում՝ պաշտպանության եւ ներքին գործերի, հիմնական ազգային բանկերի եւ ձեռնարկությունների կայքերը եւ, ամենակարեւորը, ներքին ցանցերը: Վերահսկողության տակ վերցվեցին նաեւ էստոնիայի կառավարության եւ նախագահի էլեկտրոնային կայքերը: Ամենայն հավանականությամբ, բարձր մակարդակով կազմակերպված հարվածն ուղղորդվում կամ իրականացվում էր Ռուսաստանի անվտանգության ծառայության կողմից:

Երկրորդ խոշոր անակնկալն Արեւմուտքը ստացավ հունիսին, երբ պաշտոնական Պենտագոնը հայտարարեց, թե չինական ռազմուժի հատուկ ստորաբաժանունը կարողացել է ներգործել ԱՄՆ Պաշտպանության նախարարության ներքին ցանցային համակարգի այն մասի վրա, որն օգտագործվում է նախարար Ռ.Գեյթսի խորհրդականների եւ օգնականների կողմից՝ փաստորեն, մուտք ստանալով կարեւորագույն ռազմական նշանակության նյութերին եւ հաղորդագրություններին:

Իսկ տարվա վերջին բրիտանական MI5-ը հատուկ նամակներ հղեց արեւմտյան հետախուզություններին եւ ռազմական տեխնիկա արտադրող ընկերություններին այն մասին, որ Լոնդոնը ֆիքսել է չինական ռազմական հետախուզության ցանցային հարվածներն այս կառույցների ցանցերին եւ ստորաբաժանումների տեղեկատվական բազաներին:

Վերը նշված զարգացումներում ԱՄՆ դիրքերի ապահովման համար սեպտեմբերին ԱՄՆ ռազմաօդային ուժերի ղեկավարությունը որոշում է ընդունել ստեղծել նոր «Կիբեռտարածքային ղեկավարություն» (Cyberspace Command), որի աշխատանքներին պետք է ներգրավվեն 500 առաջատար մասնագետ-ծրագրավորողներ: Ստորաբաժանման ձեւավորումը կավարտվի 2009-ին. այն կդառնա իր տեսակի մեջ խոշորագույն կառույցն աշխարհում, որի հիմնական գործառույթը պետք է լինի Զինաստանի եւ Ռուսաստանի դիրքերի ակտիվացման խափանումը:

### ***Ամերիկյան ռազմածովային կայանի ստեղծումը Իրաքում***

Զնայած 2007 թվականն անցավ ԱՄՆ ներքաղաքական կյանքում Իրաքից ամերիկյան ռազմուժի դուրսբերման անհրաժեշտության մասին քննարկումների ակտիվացմամբ, նույն 2007-ին Պենտագոնը մի կարեւոր քայլ կատարեց Իրաքում ամերիկյան ռազմական ներկայության երկարաժամկետ պահպանման ուղղությամբ: Նոյեմբերին ամերիկյան ռազմական նավատորմի ղեկավարությունը, սակավ լրատվական լուսաբանմամբ, Պարսից ծոցի իրաքյան հատվածում՝ Խոր ալ Ամայա նավթային խոշորագույն տերմինալի հարեւանությամբ իրականացրեց նոր ռազմածովային կայանի պաշտոնական բացումը: Խոր ալ Ամայա եւ դրան բավական մոտ գտնվող Բասրա նավթային տերմինալները կարեւորագույն նշանակություն ունեն համաշխարհային նավթային շուկայում: Կարելի է զոնե նշել այն, որ այս երկու տերմինալները կարող են ապահովել համաշխարհային նավթի 10%-ի բարձունն ու արտահանումը: Ավելացնենք, որ անցած տարի իրաքյան նավթը կտրուկ ամրապնդեց դիրքերը ԱՄՆ ներքին շուկայում. Իրաքը ԱՄՆ նավթ արտահանող երկրների ցուցակում 2007-ին 11-րդից

բարձրացավ 6-րդ տեղը՝ զիջելով միայն Կանադային, Մեքսիկային, Վենեսուելային, Նիգերիային եւ Սաուդյան Արաբիային: Միեւնույն ժամանակ, վերջին շրջանում ամերիկյան վերլուծություններում կարծիք է հայտնվում, որ իրաքյան նավթի միջոցով պետք է նվազեցվի ԱՄՆ կախվածությունը վենեսուելական նավթից, ինչի արդյունքում Իրաքի եւ Վենեսուելայի դիրքերը ԱՄՆ նավթ ներկրող պետությունների ցուցակում կարող են փոխվել:

Խոր ալ Ամայայի ռազմակայանը, ստեղծվելուց եւ բավարար չափով ամրապնդվելուց հետո, ըստ պաշտոնական Պենտագոնի, պետք է հանձնվի իրաքյան նավատորմին: Այս առիթով «*Wall Street Journal*» պարբերականը նշում է, որ իրաքյան նավատորմի ստեղծման հեռանկարը շատ մշուշոտ է, քանի որ ամերիկյան ծովայինները ներկայումս իրաքցիներին ընդամենը սովորեցնում են փրկարար միջոցներից օգտվելու կարգը: Իսկ «*Foreign Policy*»-ն նշում է, որ եթե կապ կա Իրաքից ամերիկյան ծովայինների հեռացման եւ իրաքյան նավատորմի ստեղծման միջեւ, ապա իրականում ամերիկյան ռազմական ուժերը դեռ երկար կմնան Իրաքում:

Ակնհայտ է նաեւ, որ ամերիկյան ռազմակայանի ստեղծումն Իրաքում նպատակ ունի ռազմական եւ ռազմավարական տեսանկյունից ամրապնդել Վաշինգտոնի դիրքերը Թեհրանի հետ հակամարտությունում: Այդ հակամարտության մոտ փուլ կարող է սկսվել ԱՄՆ-ում եւ Իրանում սպասվող նախագահական ընտրություններից հետո, որոնք կկայանան, համապատասխանաբար, 2008 եւ 2009թթ.: Իրանի դիրքերը Պարսից ծոցում ակնհայտորեն տուժում են ամերիկյան ռազմակայանի ստեղծումից հետո, քանի որ իրաքյան այս ռազմակայանը կտրուկ նվազեցնում է իրանական նավատորմի՝ Զորնուզի նեղուցի նկատմամբ ունեցած համեմատական վերահսկողության մշակակությունը: Նաեւ դրանով են, հավանաբար, պայմանավորված իրանական եւ ամերիկյան ռազմանավերի միջեւ վերջերս հաճախակիացած կոնֆլիկտները:

### **ԱՄՆ «Իսրայելական լոբբի» դիրքերի թուլացումը**

2007թ. սեպտեմբերի սկզբին ամերիկյան առաջատար գրախանութները հեղեղվեցին Ս.Վոլթի եւ Ջ.Միրշեյմերի «Իսրայելական լոբբի» գրքով, որը վաճառքի աննախադեպ բարձր ցուցանիշներ արձանագրեց: Զեղիմակներն իրենց գրքում կարծիք էին հայտնում, որ Իսրայելի աջակիցները հսկայական ազդեցություն ունեն ամերիկյան քաղաքական դաշտում եւ իրենց հայեցողությամբ կարողանում են ուղղորդել Վաշինգ-

տոնի արտաքին քաղաքականությունը թեև Ավիվին ծեռնտու ուղղությամբ: Չեղինակներն այս իրողությունը ներկայացնում են որպես սպառնալիք ԱՄՆ անվտանգությանը: Գրքի հրատարակումից մեկ շաբաթ հետո լույս տեսավ մի նոր հետազոտություն, որը նվիրված էր Իսրայելի նկատմամբ ամերիկյան հրեաների հայացքների փոփոխությանը: Չետագոտության համահեղինակներ Ա.Քոհենը *Hebrew Union College*-ից եւ Ա.Քելմանը *University of California, Davis*-ից նախաբանում նշում են. «Փոխկապակցման զգացումը (ԱՄՆ հրեաների ու Իսրայելի միջեւ) կարող է փոխվել, քանի որ բարեկեցությունը ճանապարհ է տալիս անտարբերությանը, իսկ անտարբերությունը՝ իրական օտարացմանը»: Այսպես, 1704 ոչ օրթոդոքս եւ մինչեւ 35 տարեկան ամերիկյան հրեաների մոտեցումների հետազոտությունը ցույց է տալիս, որ նրանց միայն 48%-ը Իսրայել պետության ոչնչացումը կդիտարկի որպես «անձնական ողբերգություն»: Միեւնույն ժամանակ, հարցվածների ընդամենը 54%-ն է ասում, որ իրեն լավ է զգում՝ գիտակցելով, որ երկրագնդի վրա կա հրեական պետություն:

Նշենք նաեւ, որ ԱՄՆ-ում քիչ չեն նաեւ այն հրեաները, որոնք հանդես են գալիս Իսրայելի վերացման անհրաժեշտության օգտին: Այստեղ կարելի է հիշել առաջին հերթին Ահարոն Ռուսոյի՝ 2006թ. հայտնի հարցազրույցը, որում նա նշել էր ոչ միայն իր նախկին ընկեր Ն.Ռոկֆելերի՝ սեպտեմբերի 11-ից մոտ մեկ տարի առաջ իրեն հայտնած կարծիքը, թե Մերձավոր Արեւելքում անհրաժեշտ է հաստատել ամերիկյան ռազմական գերիշխանություն եւ դրա համար ուղղակի լավ «առիթ» է պետք, այլ նաեւ առաջարկել էր կազմաքանդել Իսրայելը եւ ստեղծել հրեական պետություն ԱՄՆ Արիզոնայի նահանգում:

**ԱՂՐԲԵՋԱՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՆԻ ԱԿՏԻՎԱՑՈՒՄ  
ՎՐԱՍՏԱՆՈՒՄ  
Արաքս Փաշայան**

2007թ. նոյեմբերին Վրաստանի ԿԸՀ-ն 2008թ. հունվարի 5-ի արտահերթ նախագահական ընտրությունների թեկնածու գրանցեց թբիլիսաբնակ աղրբեջանցի Ֆազիլ Նուրմուհամեդովի Ալիեևին՝ Վրաստանի աղրբեջանցիների միջազգային խորհրդի (ՎԱՄԽ) նախագահին, ով առաջադրվել էր աղրբեջանական համայնքի, մասնավորապես՝ Վրաստանի աղրբեջանցիների ազգային ասամբլեայի (ՎԱԱԱ) եւ ՎԱՄԽ-ի կողմից: Վրաստանի պատմության մեջ առաջին անգամ է, որ աղրբեջանցիներն առաջ քաշեցին նախագահի սեփական թեկնածու: Նախատեսվում էր, որ Ֆ.Ալիեևի ընտրազանգվածը, բացի Քվեմո-Քարթլիի, Թբիլիսիի, Կախեթի, Շիդա-Քարթլիի աղրբեջանցիներից, կլինեն նաեւ Աջարիայի եւ այլ շրջանների մահմեդականներ:

Ֆ.Ալիեևի նախընտրական շտաբի պետ նշանակվեց ՎԱԱԱ նախագահ Դաշգին Գյուլմամեդովը, ով վարչակարգի ամենաարմատական ընդդիմախոսներից է եւ իշխանությունների, այդ թվում՝ նախագահ Ս.Սահակաշվիլու հասցեին թույլ է տվել ամենակոշտ որակումներ: 2007թ. նոյեմբերի 27-ին Վրաստանի իրավապահ մարմինները սահմանն անցնելիս ձերբակալեցին Դ.Գյուլմամեդովին՝ երկրում պետական հեղաշրջում կազմակերպելու մեղադրանքով:

Ստեղծված իրավիճակում՝ ընտրությունների նախօրեին, Ֆ.Ալիեևը հրաժարվեց իր թեկնածությունից: Ակնհայտ է, որ վերջինս առաջադրվել էր ոչ թե հաղթանակ տանելու, այլ աղրբեջանական համայնքին վերաբերող հիմնահարցերին քաղաքական հնչեղություն տալու նպատակով:

Աղրբեջանցիները, որոնք վրացիներից հետո ամենամեծ էթնոգավանական խումբն են Վրաստանում, հավաքական ձեւով ապրում են Քվեմո-Քարթլի նահանգում՝ հիմնականում Մառնեուլի, Գարդաբանի, Բոլնիսի եւ Դմանիսի շրջաններում: 1989թ. Վրաստանում ապրում էր մոտ 307,6 հազար աղրբեջանցի: 2002թ. նրանց թիվը նվազել է մինչեւ 284,8 հազար: Աղրբեջանցիները կասկածով են վերաբերվում նման վիճակագրությանը. նրանց շրջանում կա համոզվածություն, որ իրենք կես միլիոն եւ նույնիսկ ավելի են:

Ադրբեջանական համայնքի խնդիրները, ընդհանուր առմամբ, սկիզբ առան Վրաստանի անկախացումից հետո: Հենց այս շրջանում էլ ստեղծվեցին մի շարք ադրբեջանական հասարակական կազմակերպություններ, որոնք զբաղվում էին ադրբեջանական փոքրամասնությանն առնչվող խնդիրների քարոզչությամբ: Այսօր Վրաստանի ադրբեջանցիներին հաջողվել է ձեռավորել որոշակի դիսկուրս, ինչի արդյունքում սահմանվել են ադրբեջանական փոքրամասնության հիմնահարցերը, դիրքորոշումները Վրաստանի եւ «պաշտոնական» հայրենիքի՝ Ադրբեջանի իշխանությունների նկատմամբ, առանձին դեպքերում նաեւ իրավիճակից ելք գտնելու ուղիները:

Ադրբեջանական համայնքի ղեկավարներն առանձնացնում են երեք հիմնական խնդիրներ՝ կապված հողի, կրթության եւ լեզվի հետ:

Հողի խնդիրն առաջ է եկել նախագահ Է.Շեւարդնաձեի օրոք իրականացված ագրարային բարեփոխումների ժամանակ, ինչի արդյունքում հիմնականում հողագործությամբ զբաղվող ադրբեջանցիների մեծ մասը դուրս է մնացել հողի սեփականաշնորհման գործընթացից եւ այսօր ստիպված է աշխատել վարձակալած եւ վրացիներին պատկանող հողակտորներում: Հույսերը, թե Մ.Սահակաշվիլին կարող էր լուծել այդ հիմնախնդիրը, չիրականացան:

Ադրբեջանցիները բավարար չեն տիրապետում վրացերենին (բացառությամբ Թբիլիսիում ապրող ադրբեջանցիների), ինչը չի նպաստում նրանց ինտեգրմանը: Իսկ ադրբեջաներենը մնում է սոսկ խոսակցական լեզու, քանի որ վրացերենից բացի պետական մարմինները որեւէ այլ լեզվով զրագրություն չեն իրականացնում:

Ադրբեջանցիները դժգոհ են կրթության ոլորտում Վրաստանի իշխանությունների իրականացրած բարեփոխումներից: Այս հանգամանքը կապված է 2005թ. կրթության մասին օրենքի հետ, համաձայն որի՝ բոլոր դպրոցները պետք է վրացական ուսուցման համակարգին անցնեն՝ միաժամանակ պահպանելով ազգային լեզվի ուսուցումը:

Վերջին շրջանում փակվել են մի քանի տասնյակ ադրբեջանական դպրոցներ, կարելի է ասել՝ դպրոցներն օպտիմալացվել են: Դրանցում զգացվում է ուսուցիչների պակաս: Տարեցտարի նվազում է նաեւ բարձրագույն կրթություն ունեցող ադրբեջանցիների թիվը: Գրեթե անհետացել է ադրբեջանական մտավորականությունը, որն այսօր ներկայացնում են միայն դպրոցների տնօրեններն ու ուսուցիչները: Մշակույթի կենտրոնները եւ դպրոցները կարիք ունեն վերանորոգման:

Ադրբեջանցիները գրեթե ամբողջովին դուրս են մղվել պետական պաշտոններից, ներառյալ զինվորական ոլորտից: Ադրբեջանական

շրջաններում վարչական պաշտոնները զբաղեցնում են վրացիները:

Լրջագույն խնդիր է արտագաղթը: Առանձին տեղեկությունների համաձայն՝ վերջին 10 տարիների ընթացքում շուրջ 250 000 ադրբեջանցի է արտագաղթել երկրից՝ հիմնականում Ռուսաստան, Ադրբեջան եւ Թուրքիա: Երկիրը լքել է երիտասարդների մի զգալի հատվածը: 2007թ. սեպտեմբերին Ստամբուլում Վրաստանի ադրբեջանցիների ազգային ասամբլեայի Երիտասարդական միության հիմնադիր կոնֆերանսում հայտարարվեց, որ Սահակաշվիլու ռեժիմը ադրբեջանցի երիտասարդների կյանքը դարձրել է դժոխք, եւ որ 17-33 տարեկան շուրջ 90 հազար ադրբեջանցի երիտասարդ է արտագաղթել երկրից:

Հատկանշական է, որ արտագաղթած ադրբեջանցիներից շատերը, ովքեր որոշակի ֆինանսական հնարավորություններ ձեռք բերելով՝ ցանկանում են ներդրումներ կատարել Վրաստանի ադրբեջանաբնակ շրջաններում, չունեն դրա հնարավորությունը, քանի որ Քվեմո-Քարթլիում ենթակառուցվածքների թույլ զարգացվածության պատճառով նմանօրինակ մեխանիզմներ մշակված չեն:

Ստեղծված ծանր սոցիալ-տնտեսական իրավիճակի հիմնական պատասխանատվությունը, ըստ ադրբեջանական մեկնաբանության, կրում են Վրաստանի իշխանությունները, որոնք խտրական քաղաքականություն են վարում ադրբեջանական փոքրամասնության նկատմամբ, հաշվեհարդար տեսնում քաղաքական ակտիվություն հանդես բերող գործիչների հետ: Վկայակոչվում են նաեւ քաղաքական նկատառումներով իշխանությունների զոհ դարձած շուրջ 40 ադրբեջանցիներ, որոնց մեջ է նաեւ 2005-ին անորոշ պարագաներում անհետացած Սադախլո գյուղի մոլլա Սադրեդդին Փալենգովը:

Համաձայն ադրբեջանական տվյալների՝ իշխանությունները պարբերաբար հրահիրում են հակասություններ էթնոդավանական տարբեր խմբերի միջեւ: Ասվածի ապացույցն է 2007թ. մայիսին թուրք մսխեթցիների ահաբեկչական մտացածին մի կազմակերպության՝ «Ախալցխայի ազատագրության բրիգադի» կողմից Սամցխե-Ջավախքում հայերի դեմ ուղղված սպառնալիքները: Ըստ այդմ՝ նման քայլը նպատակ ունի հայերին ուղղորդել թուրք մսխեթցիների դեմ, որոնց իշխանությունները հետեւողականորեն խուսափում են բնակեցնել նախանշված շրջաններում:

Հատկանշական է, որ Սամցխե-Ջավախքի հայերի վիճակը դիտարկվում է որպես առավել բարվոք, իսկ իշխանական համակարգում ներկայացված վրացացած եւ ազգանունները փոխած հայերի գործոնը բացասաբար է դիտարկվում:

Հրատապ խնդիր է տեղանունների հարցը՝ այն, որ վրացական

իշխանությունները պարբերաբար փոխում են ադրբեջանական բնակավայրերի անունները վրացականով: Ադրբեջանցիներով բնակեցված շրջանները վրացիները պաշտոնապես անվանում են Քվեմո-Քարթլի, որը համանուն նահանգի անունն է, իսկ ադրբեջանցիներն այն հետեւողականորեն անվանում են Բորչալու՝ դիտարկելով «հնագույն Բորչալուն» որպես պատմական Ադրբեջանի անբախտելի մաս, որտեղ իբրեւ թե ապրել են անհիշելի ժամանակներից: Շատ դեպքերում ադրբեջանցիներին անհանգստացնում է «սեփական հայրենիքից» դուրս մղվելու հնարավորությունը. այդ կապակցությամբ բերվում է Հայաստանի եւ Ղարաբաղի ադրբեջանցիների օրինակը:

Ադրբեջանական դիսկուրսի մեկ այլ ասպեկտ կապված է Ադրբեջանի իշխանությունների նկատմամբ ունեցած դժգոհության հետ, թեւ Բաքվից ադրբեջանցիները ստանում են որոշակի սոցիալական օգնություն (ասենք՝ դասագրքեր, շտապօգնության մեքենաներ եւ այլն): Նրանց շրջանում դժգոհություն է առաջ բերել այն փաստը, որ չնայած Հ.Ալիևը խոստացել էր, որ Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթամուղի վրացական հատվածի շինարարության մեջ կներգրավվեն ադրբեջանցիներ, նման բան տեղի չունեցավ: Բացի այդ, ադրբեջանցի պաշտոնատարները շատ հաճախ Վրաստան այցելելիս չեն ձգտում լինել ադրբեջանական շրջաններում, ծանոթանալ իրենց հայրենակիցների խնդիրներին:

Ադրբեջանական համայնքում մեծ ռեզոնանս առաջ բերեց Արտերկրի ադրբեջանցիների հետ աշխատանքի պետական հանձնախմբի ղեկավար Նազիմ Իբրահիմովի՝ Վրաստանի ադրբեջանցիների վերաբերյալ կազմած հայեցակարգը, որում ադրբեջանցիների գրեթե բոլոր հիմնախնդիրների եւ վրացական հասարակության մեջ չինտեգրվելու պատասխանատվությունը կրում են ոչ թե Վրաստանի իշխանությունները, այլ հենց իրենք՝ ադրբեջանցիները՝ վրացերենին չտիրապետելու պատճառով: Հատկապես ցավազին ընկալվեց ադրբեջանական դպրոցները փակելու եւ վրացական դպրոցներում ադրբեջանցի երեխաների ուսուցումը կազմակերպելու վերջինիս առաջարկը (թեւ ադրբեջանցիները պետք է շարունակեն պահպանել իրենց լեզուն եւ ավանդույթները):

Ադրբեջանական շրջանակներն իրավիճակի հաղթահարումը տեսնում են ոչ թե Ն.Իբրահիմովի առաջ քաշած հայեցակարգի, այլ Սահակաշվիլու վարչակարգի դեմ պայքարելու, ոչ թե վրացերենը յուրացնելու, այլ՝ ադրբեջաներենը տարածաշրջանային պետական լեզու հռչակելու միջոցով՝ առաջ չքաշելով, սակայն, անջատողական ծրագրեր: Այս իրողություններն արտացոլված են 2007թ. սեպտեմբերի 18-ին Գյանջայում ՎԱԱԱ նիստի ընդունած բանաձեւում:

Փաստ է, որ Բաքուն, ձգտելով պահպանել ռազմավարական գործընկերությունը Թբիլիսիի հետ, ամեն կերպ փորձում է ազդել ադրբեջանական համայնքի գործողությունների վրա՝ դրանք դարձնելով վերահսկելի եւ զսպված (ասվածի ապացույց են ընտրապայքարից Ֆ.Ալիևի դուրս գալը, ընտրություններին ադրբեջանական համայնքի պասիվ մասնակցությունը եւ այլն):

Այս հանգամանքը, սակայն, չի խանգարում, որպեսզի հենց Ադրբեջանում (մասնա՝ Թուրքիայում) տեղի ունենան ադրբեջանական կազմակերպությունների բազմաթիվ միջոցառումներ: Այնպես որ՝ ցանկացած պահի Բաքուն Թբիլիսիի դեմ որպես կռվան կարող է օգտագործել ադրբեջանական գործոնը, որի ազդեցությունը Վրաստանում աստիճանաբար ուրվագծվում է: Սակայն այս փուլում Թբիլիսիի նկատմամբ նման գործելակերպը Բաքվին ձեռնտու չէ:

**POST-KOSOVO. ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ԺԱՄԱՆԱԿԱՇՐՁԱՆ  
Սարգիս Հարությունյան**

Չնայած միջազգային լրատվական դաշտն աստիճանաբար կենտրոնանում է Կոսովոյի անկախության հռչակման շուրջ, եւ անգամ շրջանառության մեջ է դրված վերջնաժամկետը՝ փետրվարի առաջին կես, սակայն այն պահից ի վեր, ինչ Միացյալ Նահանգներն ու Եվրամիությունը գործի գցեցին երկրամասի անկախության ճանաչման մեխանիզմը<sup>1</sup>, այլեւս առաջնային դարձավ ոչ թե բուն Կոսովոյի անկախության ճանաչման հարցը (այդ հարցը, փաստորեն, լուծված է), այլ՝ դրան հետեւող հնարավոր զարգացումները:

Դժվար թե պատահականություն լինի այն, որ բազմաթիվ այլ մեխանիզմների շարքում Արեւմուտքում որոշեցին «Սերբիային պատժելու» ու Բալկաններում սեփական ազդեցությունը մեծացնելու միջոց ընտրել պետության քաղաքական սահմանների ուղղակի փոփոխությունը՝ շատ լավ հասկանալով, որ այն չի կարող ունենալ սոսկ լոկալ՝ տարածաշրջանային հետեւանքներ:

Չետեւաբար, հաշվարկի կենտրոնում պետք է լինի ոչ թե բալկանյան տարածաշրջանը եւ ոչ էլ Ռուսաստանի հեղինակության ու ազդեցության կրճատումը Եվրոպայում, այլ միջազգային բնույթի քաղաքական նոր գործընթացի սկզբնավորումը:

Այս պարագայում գլխավոր հետեւությունը, թերեւս, ունի հետեւյալ ձեւակերպումը. եթե ներկայացվածը համապատասխանում է իրականությանը, ապա հնարավոր է, որ առաջիկայում մենք լուրջ նորությունների սպասենք ոչ այնքան Ռուսաստան–Աբխազիա, Ռուսաստան–Հարավային

---

<sup>1</sup> Հունվարի 11-ին ամերիկյան Associated Press-ը հաղորդեց, թե Միացյալ Նահանգներն ու Գերմանիան քաղաքական որոշման են հանգել՝ ճանաչել Կոսովոյի անկախությունը եւ նպաստել, որ իրենց օրինակին հետեւեն Եվրամիության մյուս անդամները: Պակաս ուշագրավ չէր Կոսովոյի մայրաքաղաք Պրիշտինա՝ Չեխիայի արտգործնախարար Կարել Շվարցենբերգի հունվարի 14-ի աշխատանքային այցելության փաստը եւ վերջինիս հայտարարությունը, թե պաշտոնական Պրահան սպասում է, որ շատ շուտով Կոսովոն կդառնա անկախ:

Օսիա կամ Թուրքիա–Հյուսիսային Կիպրոս ուղղություններից, որքան նախ եւ առաջ Դարֆուրից եւ որն էլ ավելի հիմնավորված է թվում՝ իրաքյան Քուրդիստանից:

### **Իրաքյան Քուրդիստան. իրավիճակային վերլուծություն**

Նախորդ մոտ երեք ամիսների ընթացքում իրաքյան Քուրդիստանի շուրջ առկա իրավիճակում ի հայտ եկավ բավական էական մի նորություն, որը կարծես թե առայժմ պատշաճ կերպով ներկայացված չէ միջազգային տեղեկատվական դաշտում: Չնայած անցած տարվա հոկտեմբերի վերջերից թուրքական ռազմուժի կողմից իրականացված կանոնավոր բնույթի հարձակումներին եւ գլխավորապես Քրդական բանվորական կուսակցության զինյալների շրջանում տեղ գտած կորուստներին<sup>2</sup>, փաստն այն է, որ՝

❖ Անկարայի ռազմական ակցիաներն անվտանգության, քաղաքական ու տնտեսական առումներով որեւէ լուրջ հետեւանք չունեցան իրաքյան Քուրդիստանի ազգային վարչակազմի համար,

❖ մյուս կողմից, չնայած թուրքական բանակին Պենտագոնի ցուցաբերած հետախուզական ու տեխնիկական բնույթի օժանդակությամբ, ինչպես նաեւ ամերիկյան դիվանագիտության պաշտոնական տարաբնույթ հայտարարություններին, Վաշինգտոնում որոշում կայացվեց արգելել Հյուսիսային Իրաք թուրքական լայնածավալ հարձակումը:

Այլ կերպ ասած, եթե 2003-ից ի վեր՝ սադամյան Իրաքի կազմալուծումից հետո, Թուրքիան համարվում էր իրաքյան Քուրդիստանի կայացման թիվ մեկ խոչընդոտը, ապա ողջ 2007թ. ամռանն ու աշնան սկզբին տեւած նախապատրաստական կամպանիայից հետո Թուրքիայի ընդամենը մարտավարական գրոհները Իրաքի հյուսիսի նկատմամբ թույլ են տալիս խոսել թուրքական խոչընդոտի արժեզրկման մասին՝ առնվազն քաղաքական հարթությունում: Էլ ավելի կարելու է, որ նման արդյունք է ստացվում ԱՄՆ ներգրավվածության հետեւանքով<sup>3</sup>:

<sup>2</sup> Թուրքական աղբյուրները նշում են մոտ 300 թիվը:

<sup>3</sup> Օրինակ, հունվարի 8-ին Վաշինգտոնում կայացած Բուշ–Գյուլ հանդիպման ժամանակ ԱՄՆ նախագահը հարկ համարեց հայտարարել, թե «քրդական ահաբեկչության դեմ պայքարը չի կարող հաջողել միայն ռազմական ակցիաներով»:

2007թ. հոկտեմբերից թուրքական մոտ 100 հազ.-ոց ռազմուժի մաներները իրաքյան Քուրդիստանի սահմանի մոտ չէին վերաբերում հյուսիսիրաքյան Քուրդիստանի տարածաշրջանային կառավարության (ՔՏԿ) կողմից անկախության հռչակման հավանականությանը (այսօր Իրաքի քրդական վերնախավը նման օրակարգ չունի), այլ ուղղակի ճնշում էին Քիրքուկի հետագա կարգավիճակին վերաբերող քրդերի նախաձեռնած հանրաքվեի<sup>4</sup> ուղղությամբ: Սակայն այսօր նկատվող միտումը կարող է այդ հարցում անակնկալ մատուցել Անկարային:

2007թ. աշնանը օտարերկրյա մոտ 20 ընկերությունների հետ նավթի արդյունահանման վերաբերյալ ՔՏԿ կնքած պայմանագրերից հետո իրաքյան Քուրդիստանին առնչվող զարգացումներում կարելու տեղ է զբաղեցնում Քիրքուկի պատկանելության հարցը (*տե՛ս աղյուսակ 1*):

Ի սկզբանե նախատեսված էր, որ հանրաքվեն պետք է կայանա 2007թ. նոյեմբերի 15-ին, սակայն հետո այն հետաձգվեց՝ նշանակվելով 2007թ. դեկտեմբերի 31-ին: Ինչպես նշվեց, 2007թ. հոկտեմբերից ակտիվ կերպով կիրառվող ռազմաքաղաքական ճնշման արդյունքում Անկարան կարողացավ հասնել հանրաքվեի հետաձգմանը, եւ դեկտեմբերի 18-ին անսպասելիորեն Քիրքուկ ժամանած Քոնդոլիզա Ռայսը, որի հետ հրաժարվեց հանդիպել իրաքյան Քուրդիստանի նախագահ Մասուդ Բարզանին, բերել էր հենց այդ պահանջը: Բայց գրեթե միաժամանակ ի հայտ եկան առնվազն երեք ցուցիչներ, որոնք հիմք են տալիս ենթադրելու, թե Անկարայի հաջողությունները մարտավարական են.

❖ 2007թ. դեկտեմբերի 28-ին հայտնի դարձավ, որ այդ շաբաթվա սկզբներին Իրաքի քրդական առաջատար երկու կուսակցությունները՝ Քուրդիստանի հայրենասիրական միությունը (ղեկավարն է Իրաքի նախագահ Ջալալ Թալաբանին) եւ Քուրդիստանի դեմոկրատական կուսակցությունը (ղեկավարն է իրաքյան Քուրդիստանի նախագահ Մասուդ Բարզանին), Քիրքուկի եւ հյուսիսիրաքյան նավթի եկամուտների վերաբերյալ քաղաքական համագործակցության համաձայնագիր են ստորագրել սույնի արաբների Իրաքի իսլամական կուսակցության հետ,

<sup>4</sup> ՔՏԿ-ի կողմից առաջարկվող հանրաքվեն վերաբերում է Իրաքի հյուսիսային եւ հյուսիսարեւելյան 3 նահանգներին՝ Նինավա, Քիրքուկ, Դիյալա: Ներկայումս ՔՏԿ ենթակայության ներքո գտնվող 3 նահանգների՝ Սուլեյմանիա, Էրբիլ, Դահուկ, ընդհանուր տարածքը կազմում է 38 004 կմ<sup>2</sup>: Նինավայի, Քիրքուկի ու Դիյալայի միացումով այդ թիվը կհասնի 103.294 կմ<sup>2</sup>՝ ավելի քան 8,5 մլն բնակչությամբ, որից մոտ 53%-ը քրդեր են:

❖ Եւրոյն դեկտեմբերին Իրաքի նախարար Յուսէյն ալ-Շահրիստանին հայտարարեց, թէ իր գերատեսչութիւնը նախապատրաստական աշխատանքներ է տանում Իրաքի խոշորագոյն նավթահանքերի, այդ թվում՝ Քիրքուկի վերաբերյալ օտարերկրյա ընկերութիւնների հետ համապատասխան պայմանագրեր կնքելու ուղղությամբ,

❖ Եւ վերջապէս, չնայած 2007թ. վերջերին ի հայտ եկած տեղեկութիւններին, թէ Քիրքուկի պատկանելւոյան վերաբերյալ հանրաքվէն կարող է հետաձգվել 4-5 տարով, սակայն այս հունվարին արդէն պարզ դարձավ, որ սուսնի ու շիա արաբների եւ քրդերի միջեւ ձեռք բերված պայմանավորվածութեան համաձայն, այն կայանալու է 2008թ. կեսերին:

Բոլոր երեք ցուցիչներն էլ թույլ են տալիս եզրակացնել, որ՝

❖ չնայած Անկարայի ճնշմանը, իրաքյան քրդերը կարողացել են իրենց հիմնական ընդդիմախոսների՝ արաբների հետ սկզբունքային համաձայնութեան հանգել Քիրքուկի հարցի վերաբերյալ, ինչն առնվազն ենթադրում է, որ ԲՏԿ վերահսկողութեան ներքո պետք է անցնի հյուսիս-իրաքյան մեծ նավթի գոնէ մի մասը,

❖ մյուս կողմից՝ հատկապէս ալ-Շահրիստանիի հայտարարութիւնը եւ 2008թ. կեսերին կայանալիք Քիրքուկի հանրաքվէի մասին տեղեկութիւնը վկայում են, թէ Քիրքուկի հարցի շուրջ պայմանավորվածութիւնները համաձայնեցված են ամերիկյան կողմի հետ,

❖ Եւ եթէ ներկայացված տրամաբանութիւնը ճիշտ է, ապա պետք է փաստել, որ իրաքյան Քուրդիստանի կայացման գործընթացը շարունակում է գտնվել դինամիկ փուլում:

### **Յետեւութիւններ**

Կոսովոյի շուրջ ընթացող գործընթացի մասշտաբայնութիւնը հուշում է, թէ ամենեւին էլ պատահական չէ, որ վերջին շրջանում ի հայտ եկող ճգնաժամերի հետ կապված՝ արեւմտյան փորձագիտական միտքն ավելի շատ հղում է կատարում պետութիւնների մասնատման դրոյթին, քան ժողովրդավարական կարգերի ամրապնդման միջոցով այդ ճգնաժամերի հաղթահարմանը: Բալկաններից զատ կարող են ներկայացվածի օրինակներ ծառայել Իրաքին, Դարֆուրին եւ Պակիստանին առնչվող զարգացումները:

Միաժամանակ, չպետք է բացառել, որ վերոհիշյալն ունի շատ կարեւոր մի նպատակ՝ բազմաբեւեռ աշխարհակարգի ձեւավորման գործընթացում հնարավորինս լավ ապահովել արեւմտյան շահերի պաշտպանութիւնը:

Աղյուսակ 1

<b>Քիրքուկի նահանգ</b>	
<p>2005թ. ընդունված Իրաքի սահմանադրության 140-րդ հոդվածի համաձայն, մինչև 2007թ. դեկտեմբերի 31-ը հանրաքվեով պետք է հստակեցվեր, թե արդյոք Քիրքուկ նահանգը մաս է կազմելու իրաքյան Քուրդիստանին:</p>	
<b>Նավթ</b>	<b>Էթնիկ պատկեր</b>
<ul style="list-style-type: none"> <li>❖ ԱՄՆ Էներգետիկայի նախարարության համաձայն, Իրաքն ունի 93 մլրդ բարել նավթի ապացուցված պաշարներ, որից 10 մլրդ-ը գտնվում է Քիրքուկ նահանգում:</li> <li>❖ ՔՏԿ նավթի նախարար Աշտի Չավրամիի 2007թ. դեկտեմբերի 26-ի հայտարարության համաձայն, պաշտոնական էրբիլի վերահսկողության ներքո գտնվող 3 նահանգներում (Սուլեյմանիա, Էրբիլ, Դահուկ) այսօր իրականացվող ծրագրերը թույլ կտան ՔՏԿ-ին առաջիկա 2 տարիներին հասնել օրական 200 հազ. բարել նավթի արդյունահանմանը, իսկ 5 տարի հետո՝ օրական 1 մլն բարելի, եւ սա՝ չհաշված Քիրքուկի նավթի պաշարները:</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>Քիրքուկ նահանգում ժամանակակից էթնիկ պատկերի վերաբերյալ թվերը բացակայում են: Սակայն հայտնի են երկու թիվ.</li> <li>❖ մինչ օրս միջազգային տարաբնույթ ուսումնասիրություններում լուրջ են վերաբերվում միայն 1957թ. մարդահամարի տվյալներին, ըստ որի՝ այն ժամանակ Քիրքուկ նահանգի բնակչության 48.3%-ը քրդեր էին, 28.2%-ը՝ արաբներ, 21.4%-ը՝ թուրքմեններ, իսկ մնացած 2.1%-ը՝ գլխավորապես քրիստոնյաներ,</li> <li>❖ 2005թ. հունիսի 30-ին տեղի ունեցած Քիրքուկի նահանգային խորհրդի ընտրությունների արդյունքում 41 տեղանոց խորհրդում ձայները բաժանվեցին հետեւյալ կերպ. քրդեր՝ 26 տեղ, թուրքմեններ՝ 9 տեղ, արաբներ՝ 6 տեղ:</li> </ul>

## **ՊԱԿԻՍՏԱՆ. ԱՆՈՐՈՇ ՀԵՌԱՆԿԱՐ** **Սուրեն Մանուկյան**

2007թ. օգոստոսին Պակիստանում հանդիսավոր պայմաններում նշվում էր երկրի անկախության 60-ամյակը: Տոնակատարությունները պետք է ցույց տային խոշորագույն՝ 160 միլիոն բնակչությամբ, իսլամական միակ միջուկային տերության հաջողությունները, հզորությունը եւ հավակնությունները:

Սակայն իրականում այնպես ստացվեց, որ հորբեյանը Պակիստանը դիմավորեց չափազանց ծանր ժամանակահատվածում, երբ երկիրը բախվել է բազմաթիվ լրջագույն խնդիրների, իսկ համընդհանուր ճգնաժամը գնալով խորանում է:

### **Ներքաղաքական ճգնաժամ**

Տարվա հենց սկզբից երկիրը ցնցվեց բռնության ակտերից՝ քաղաքների փողոցներում պայթյուններ էին որոտում, Աֆղանստանի հետ սահմանային շրջաններում իսկական պարտիզանական պատերազմ էր, քաղաքական սպանություններ էին իրականացվում, աննախադեպ ակտիվացել էին կրոնական ծայրահեղականները:

Տարվա վերջում լրջորեն սրվեց ներքաղաքական իրավիճակը: Քաղաքական ակտիվացումը կարելի էր բնական համարել, քանի որ հոկտեմբերին նշանակված էին նախագահի, իսկ 2008թ. հունվարին՝ խորհրդարանական ընտրություններ: Սակայն այն ծայրահեղ առճակատումը, որին գնացին կողմերը, աննախադեպ էր:

1999թ. ռազմական հեղաշրջումից հետո իշխանությունը գրաված եւ 2002թ. հանրաքվեի միջոցով իր լիազորությունները երկարաձգած նախագահ Փերվեզ Մուշարաֆին մարտահրավեր նետեցին երկու նախկին վարչապետեր, որոնք երկրից հեռացել էին հեղաշրջումից հետո: Նրանցից մեկին՝ Նավազ Շարիֆին, Գերագույն դատարանը հայրենիք վերադառնալ թույլատրեց օգոստոսին, իսկ մյուսին՝ Բենազիր Բհուտոյին, հոկտեմբերին:

Հետաքրքիր է հենց Գերագույն դատարանի պահվածքը, որն ուղղակի առճակատման գնաց նախագահի հետ՝ նրա դեմ ուղղված քայլեր ձեռնար-

կելով եւ պայմաններ առաջադրելով, մինչեւ որ նախագահը չնախա-  
ձեռնեց այս դատական ատյանի մի քանի դատավորների փոփոխությունը  
իր հանդեպ ավելի լոյալ տրամադրված անձանցով:

Մեղքերի թողություն ստացած երկու վարչապետերն էլ շտապեցին  
վերադառնալ հայրենիք, սակայն եթե Շարիֆը հենց օդանավակայանից  
կրկին հեռացվեց երկրից (նա նորից վերադարձավ Պակիստան միայն  
նոյեմբերի վերջին), ապա Բհուտոն սկզբնական շրջանում որոշակի  
համաձայնության գալով Մուշարաֆի հետ (Մուշարաֆը խոստացել էր  
վերընտրվելու դեպքում նրան վարչապետի պաշտոն առաջարկել)`  
հոկտեմբերին ժամանեց Պակիստան եւ սկսեց ակտիվ քաղաքական  
գործունեությունը:

Չոկտեմբերի 6-ին Մուշարաֆը հաղթեց ընտրություններում, սակայն  
Գերագույն դատարանը ձգձգեց նրան նախագահ հռչակելու գործընթացը,  
ինչի հետեւանքով իրավիճակն այնքան սրվեց, որ վերընտրված  
Մուշարաֆն ուղղակի ստիպված եղավ արտակարգ դրություն մտցնել  
երկրում եւ դադարեցնել սահմանադրության գործունեությունը: Սա  
առաջացրեց մեծ դժգոհություն երկրի ներսում եւ ճնշումներ երկրից դուրս:  
ԱՄՆ նախագահը հայտարարեց, որ Մուշարաֆն ուղղակի պարտավոր է  
չեղյալ հայտարարել արտակարգ դրությունը եւ հրաժարվել բանակի  
գլխավոր շտաբի պետի պաշտոնից: Նրան միացավ նաեւ ՄԱԿ գլխավոր  
քարտուղար Պան Գի Մունը:

Այս խառը իրավիճակում, նոյեմբերի 15-ին լրացավ խորհրդարանի  
լիազորությունների ժամկետը, եւ նախագահը ժամանակավոր կառավա-  
րություն կազմեց` մինչեւ նոր ընտրությունների անցկացումը:

Նոյեմբերի կեսերից ընդդիմության առաջնորդ դարձավ Բհուտոն, որը  
մինչ այդ բավական լոյալ էր տրամադրված նախագահի նկատմամբ:  
Հստակ գիտակցելով Մուշարաֆի ակնհայտ թուլացումը` նա արմա-  
տականացրեց սեփական դիրքորոշումը: Բհուտոն նույնիսկ խոստացավ  
մասնակցել ընդդիմության ամենամեծ հանրահավաքին, իսկ հետո  
գլխավորել երթը Լահորից դեպի Իսլամաբադ: Բհուտոյի ակտիվությունն  
օրեցօր աճում էր, եւ նրան չխանգարեց նույնիսկ տնային կալանքը:

Նոյեմբերի 25-ին երկիր վերադարձավ նաեւ Նավազ Շարիֆը, իսկ  
28-ին Մուշարաֆը վերջապես կատարեց իր խոստումը` հանելով  
զինվորականի համազգեստը եւ հաջորդ օրը հռչակվելով որպես երկրի  
քաղաքացիական նախագահ: Դեկտեմբերի 15-ին նա գնաց եւս մեկ  
զիջման` դադարեցնելով երկրում արտակարգ դրությունը:

Դեկտեմբերի 27-ին Ռավալպինդիում իր կուսակցության հանրահավաքի ժամանակ ռունբի պայթյունի հետեւանքով սպանվեց Բենազիր Բհուտոն, որից հետո նրա հարազատ Սինդ նահանգում սկսվեցին զանգվածային անկարգություններ:

Հունվարի 6-ին նշանակված խորհրդարանական ընտրությունները նորից հետաձգվեցին:

Երկիրը կանգնած է քաղաքացիական պատերազմի առաջ, քանի որ ընտրությունների տապալումը կարող է շարունակական դարձնել զանգվածային անկարգությունները, որոնց դեմն առնելու մի տարբերակ կմնա՝ դուրս բերել բանակը զորանոցներից:

### **Պակիստանյան ժողովրդավարություն**

Վերլուծելով պակիստանյան խնդրումները՝ զարմանքով կարելի է արձանագրել, թե որքան հաճախ է արտասանվում «ժողովրդավարություն» բառը: Ինքը՝ Բհուտոն, բազմիցս հայտարարում էր, թե գալիս է վերականգնելու ժողովրդավարությունը: Արդյո՞ք դա այդպես է:

Երկրի պատմությունը ցույց է տալիս, որ նախկին մետրոպոլիայից՝ Մեծ Բրիտանիայից ստանալով ժողովրդավարական համակարգ՝ Պակիստանը մշտապես ծնում է դիկտատորներ, որոնք փոխարինում են մեկը մյուսին՝ իշխանությունը սեփական ձեռքերում կենտրոնացնելու համար ժողովրդավարությունն ամեն անգամ շահարկելով:

Այսպես, Բենազիր Բհուտոն իր պաշտոնավարման ժամանակ (1988-ի դեկտեմբերից 1990թ. օգոստոս եւ 1993թ. հոկտեմբերից 1996թ. նոյեմբեր) առանձնապես աչքի չի ընկել ազատական հայացքներով, թեւեւ հետեւողականորեն փորձել է ժողովրդավարության հաղթանակը նույնացնել զինվորականների իշխանության դեմ պայքարով: Իրոք, նա, ինչպես եւ իր հայրը՝ Ջուլֆիքար Ալի Բհուտոն, որն իշխանության եկավ 1971թ., փորձում էին նվազեցնել երկրի կառավարման մեջ բանակի ազդեցությունը եւ որոշակիորեն ազատականացնել տնտեսությունը, սակայն դիտարկել այդ պայքարը ժողովրդավարություն–ավտորիտարիզմ համակարգում՝ սխալ է. այն ավելի շատ քաղաքացիական եւ զինվորական էլիտաների միջեւ պայքար է: Բհուտոն-ավագն, օրինակ, որին դուստրն իր քաղաքական կուռքն էր համարում, բնաջնջեց մոտ երեք միլիոն բենգալցիների, երբ վերջիններս 1971թ. անկախության պահանջ բարձրացրին:

Իշխանության համար այս պայքարը, սակայն, հետեւում է թողել ավելի խորքային երկու խնդիր, որոնք չեն լուծվելու՝ անկախ պակիստանյան վերնախավի միջեւ ընթացող պայքարից:

### **Բելուջական հանգույցը**

Պակիստանն իր անկախության առաջին իսկ տարիներից պայքար է մղել կենտրոնախույս դրսեւորումների դեմ (հիշեցնենք, որ 1971 թվականին Արեւելյան Պակիստանն անջատվեց արյունալի պատերազմից հետո եւ վերածվեց Բանգլադեշ պետության):

Այսօր էլ երկրի բանակը ստիպված է մշտապես ճնշել ինքնավարության ձգտումները եւ անջատողական խմբերի գործողությունները:

Այս առումով, ներկայումս ամենալուրջ խնդիրը բելուջական ընդվզումն է: Իրավիճակը բելուջական փոքրամասնությամբ բնակեցված երկրի հարավային մասում գտնվող ամենամեծ նահանգում սկսեց սրվել դեռ 2003թ.: Պակիստանի մոտ 40 տոկոսը զբաղեցնող նահանգում բնակվում է ընդամենը 8 մլն մարդ, ինչի պատճառը Բելուջիստանի ծանր գյուղատնտեսական պայմաններն են, արդյունաբերության ցածր զարգացածությունը եւ որպես հետեւանք՝ համատարած հետամնացությունը եւ բնակչության չափազանց աղքատությունը: Դրան գումարվում է տեղական ցեղերի եւ ցեղախմբերի առաջնորդների դժգոհությունն այն ստորադաս դիրքից, որ վերջիններս զբաղեցնում են ժամանակակից Պակիստանի հասարակական-քաղաքական վերնախավում: Այստեղ 2004 թվականից արդեն փաստացի պարտիզանական պատերազմ է ընթանում կենտրոնական իշխանությունների դեմ:

Ներկայումս Բելուջիստանում նախաձեռնվել են երկու խոշորագույն նախագիծ, սակայն տեղական էլիտան մտավախություն ունի, որ նորից<sup>1</sup> դրանք կհայտնվեն իշխող փանջաբցիների լիակատար վերահսկողության տակ:

Խոսքը չինացիների ֆինանսական եւ տեխնիկական օգնությամբ կառուցվող ժամանակակից Գվադար նավահանգստի եւ Իրան–Պակիստան–Չնդկաստան նավթամուղի կառուցման մասին է:

---

<sup>1</sup> Բելուջիստանը հարուստ է բնական գազի պաշարներով, սակայն Սուի հանքավայրը, գազ մատակարարելով ամբողջ երկրին, միայն վերջին հերթին սկսեց օգտագործվել տեղական կարիքների համար:

Տեղացիները չեն ցանկանում այս նոր նախագծերում էլ հայտնվել խաղից դուրս վիճակում եւ բարձրացնում են կայունության գինը՝ ժամանակ առ ժամանակ կազմակերպելով դիվերսիոն եւ սաբոտաժի գործողություններ:

### **Մուշարաֆն իսլամականների եւ ԱՄՆ-ի միջեւ**

Եվս մի գործոն, որը հսկայական նշանակություն ունի Պակիստանի համար, իսլամիզմն է: Այլ կերպ չէր էլ կարող լինել: Պակիստանը որպես պետություն առաջացել է հենց իսլամական ինքնության հիման վրա՝ դառնալով Բրիտանական Յնդկաստանի մահմեդականների երկիր:

Թեեւ երկրում հաստատված են աշխարհիկ կարգեր, սակայն իսլամիստական կուսակցությունները բավական ակտիվ են եւ հաջողակ: Այսպես, 2002թ. խորհրդարանական ընտրություններում նրանք տպավորիչ հաղթանակ տարան եւ կառավարություն ձեւավորեցին Յյուսիսարեւմտյան սահմանային նահանգում, ինչպես նաեւ մտան Բելուջիստանի կառավարության կոալիցիայի մեջ:

Սակայն նույնիսկ այս պարագայում երկրում կա իսլամիստական դժգոհություն, եւ հստակ նկատվում է իսլամականների ուժեղացում:

Ամենատպավորիչ իրադարձությունը, թերեւս, 2007թ. հուլիսի սկզբին մայրաքաղաքում Կարմիր մզկիթի գրավումն էր իսլամական դպրոցների ուսանողների կողմից, որը պակիստանյան ուժային կառույցները դաժանորեն ճնշեցին:

Ծայրահեղ իսլամականները մեղադրում են Մուշարաֆի կառավարությանն ԱՄՆ-ի հետ սերտ հարաբերությունների եւ 2001 թվականից հակաահաբեկչական կոալիցիայի ակտիվ անդամ լինելու մեջ: Սակայն Պակիստանի նախագահն այլ ելք չուներ: 1999թ. հեղաշրջումից հետո նա միջազգային մեկուսացման մեջ էր հայտնվել. դառնալով տարածաշրջանում ԱՄՆ հիմնական դաշնակիցը՝ Մուշարաֆը կարողացավ որոշակիորեն օրինականացնել իր իշխանությունը եւ ազատվեց մեկուսացումից:

Սակայն արտաքին օգնությունը բերեց ներքին բարդությունների: Վարչակարգը հայտարարվեց իսլամից հեռացած եւ բանադրվեց: Պակիստանի եւ Աֆղանստանի միջեւ ընկած, փուշտունական ցեղերով բնակեցված Յյուսիսարեւմտյան սահմանային նահանգում իսկական իսլամական ապստամբություն բռնկվեց, եւ պակիստանյան բանակը հնարավորություն չունի հաջող գործողություններ իրականացնել:

լեռնային դժվարանցանելի շրջաններում, որտեղ ապաստան են գտել Տալիբանի եւ ալ Կաիդայի ուժերը:

Ծայրահեղ իսլամական ուժերի հնարավոր հաղթանակն, իր հերթին, ամենասարսափելի ելքն է ԱՄՆ-ի համար, որն արդեն հայտարարել է, թե երկրում ապակայունացման շարունակման դեպքում պատրաստ է նույնիսկ Պակիստանի դեմ հակաահաբեկչական գործողություն կիրառել, որի ընթացքում ամերիկյան խմբավորումը զբաղեցնելու է Պակիստանի միջուկային զենքի տեղակայման վայրերը՝ դրանց վերահսկելիությունն ապահովելու համար:

Պակիստանյան իրադարձությունները շատ հետաքրքիր իրավիճակ են ստեղծել, որը կարող է հանգուցալուծվել արեւելյան հասարակությունների համար սովորական բանաձեւով՝ կամ երկրում սահմանվում է ուժեղ իշխանություն (բռնատիրություն), կամ ժողովրդավարացման փորձերը բերում են անկանխատեսելի հետեւանքների եւ քաոսի:

## ՄԵՐԾԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔԻ ԱՊԱՔՐԻՍՏՈՆԵԱՑՈՒՄԸ

### Օ. Սկոպիչ

Մերձավորարեւելյան տարածաշրջանի երկրներում արդի գլոբալացման դեմ զարգացող «պաշտպանական ռեակցիաներից» կարելի է առանձնացնել մի այնպիսի գործընթաց, ինչպիսին է տարածաշրջանի «ապաքրիստոնեացումը»:

Ապաքրիստոնեացմանը՝ Մերձավոր Արեւելքի երկրներից քրիստոնյաների արտագաղթին, շատ բանում օժանդակում են իսլամական ծայրահեղականության աճը, զինվորական, պետական եւ գործարար վերնախավի իսլամացումը: Մերձավոր Արեւելքում քրիստոնյաների թվաքանակը, տարբեր տվյալներով, կազմում է 12-ից մինչեւ 15 մլն մարդ: Պաշտոնական տեղեկատվության պակասի եւ մշտական գաղթի պատճառով դժվար է ճշգրիտ թիվ սահմանել: 20-րդ դարի սկզբին քրիստոնյաները կազմում էին տարածաշրջանի բնակչության 24 տոկոսը՝ ներառյալ Պաղեստինը, Եգիպտոսը, Չորդանանը, Լիբանանը, Սիրիան, Իրաքը եւ Թուրքիան: Այսօր նրանք 5 տոկոսից ավելի չեն: 70-ական թվականներին Իրաքում քրիստոնյաները կազմում էին 5,8 տոկոս, այսօր՝ 3 տոկոս: Երկրորդ աշխարհամարտից հետո Բեթղեհեմում քրիստոնյաները հաշվվում էին 85 տոկոս, այսօր՝ 12 տոկոս: Նույն միտումը բնորոշ է քրիստոնյաների համար մյուս սուրբ քաղաքին՝ Երուսաղեմին, որտեղ քրիստոնյաների թիվը 1922թ. 53 տոկոսից նվազել է մինչեւ ներկայիս 2 տոկոսը: 20-րդ դարի սկզբին քրիստոնյաները Սիրիայում կազմում էին երկրի բնակչության մեկ երրորդը, այսօր՝ 10 տոկոսից պակաս: Չորդանանում նույն իրավիճակն է. բնակչության ընդհանուր թվաքանակի մեջ քրիստոնյաների բաժինը 20-րդ դարի սկզբի համեմատ կրճատվել է շուրջ 10 տոկոսով: Եգիպտոսում դպտիների թիվը 70-ական թվականների համեմատ նվազել է մոտ երկու անգամ:

Պատերազմներն Իրաքում, դրացի համայնքների անվստահությունը եւ այլ գործոններ քրիստոնյաներին լուրջ հարված հասցրին: Անգլիկան եկեղեցու առաջնորդը Լոնդոնին ու Վաշինգտոնին մեղադրեց Իրաքի նկատմամբ «անհեռատես կուրսի» անցկացման մեջ, ինչը, նրա խոսքերով, սպառնալիք է ստեղծել «տարածաշրջանում քրիստոնեական համայնքի բուն գոյությանը»:

Քրիստոնյաներն աստիճանաբար հեռանում են Լիբանանից, Եգիպ-

տոսից ու Մերձավոր Արեւելքի այլ երկրներից: Իրաքում վերջին մարդահամարը (1987թ.) ցույց տվեց, որ երկրում ապրել է 1,4 մլն քրիստոնյա: Շատերն արտագաղթեցին 1990-ին երկրի նկատմամբ տնտեսական պատժամիջոցներ մտցնելուց հետո: Սադամ Հուսեյնի վարչակարգի տապալումից հետո սաստկացան քրիստոնյաների հանդեպ հալածանքները, որոնց որոշ իսլամիստներ կոչում էին «խաչակիրներ», «ԱՄՆ գործերին նվիրվածներ»: Տեղի Քրիստոնեական խաղաղ ասոցիացիայի տվյալներով՝ այսօր Իրաքի քրիստոնյաները կազմում են 450 հազար (մինչ ԱՄՆ գործողությունը եղած 800 հազարի փոխարեն), որոնց հաճախումները եկեղեցիներ կտրուկ նվազել են:

Հյուսիսային Իրաքի երբիլ քաղաքն այսօր դարձել է գլխավոր ապաստան քրիստոնյաների ներքին տեղափոխության համար, որոնց թիվը, տեղի կրոնական առաջնորդների գնահատականներով, հաշվվում է հազարներով: Բաղդադի ավանդաբար քրիստոնեական այնպիսի շրջաններ, ինչպիսիք են Դորան եւ Քարադը, այսօր գործնականում դատարկվել են:

Հալածանքների նոր ալիք բարձրացավ 2006թ. սեպտեմբերին՝ ի պատասխան իսլամի հասցեին Բենեդիկտոս XVI պապի արած արտահայտությունների: Կրկին հաճախացան պայթյունները եկեղեցիներում, Մոսուլի քահանաներից մեկն առեւանգվեց ու գլխատվեց: Հռոմի պապի ելույթից հետո Բաղդադի եկեղեցիների առնվազն 60 տոկոսը ծայրահեղականների գրոհների վտանգի պատճառով փակվեց (մինչ պատերազմը Բաղդադի քրիստոնեական համայնքն ընդհանրապես ամենամեծն էր ողջ Մերձավոր Արեւելքում):

Այսօր Իրաքում շարունակ տեղի են ունենում հարձակումներ քրիստոնյաների վրա, հաճախակի են դարձել առեւանգումները: Հարյուր տարի անց վերադարձավ ջիզան. շատ քրիստոնյաների ստիպում են վճարել հատուկ հարկ, որը երբեմն կազմում է հարյուրավոր, անգամ հազարավոր դոլարներ: Քրիստոնյա ծնողները երկյուղում են իրենց երեխաներին ուղարկել դպրոց եւ ինստիտուտ՝ նրանց հասակակիցների կողմից սպառնալիքների պատճառով: Քրիստոնյա կանայք սկսում են կրել աբա (մուսուլման կանանց ավանդական վերնազգեստ) ու գլուխը ծածկել գլխաշորով, որպեսզի չտարբերվեն մուսուլման կանանցից:

Իրաքից քրիստոնյաների դատարկվելուն միանում են եւ պաղեստինյան տարածքների բնակիչները: Քրիստոնյաների թվաքանակը կազմում է մոտ 40-50 հազար՝ տարածքի բնակչության շուրջ 2 տոկոսը, որոնցից 2 հազարը Գազայում են (բնակչության 1 տոկոսից պակաս): Զինված բախումները, ներառյալ պաղեստինյան գրոհայինների հարձա-

կումները եւ իսրայելական հակաահաբեկչական միջոցները, տնտեսական անկումն ու ծնելիության ցածր մակարդակը հանգեցնում են քրիստոնյաների թվի կրճատման: 1970թ. նրանք կազմում էին տարածքի բնակչության 5,3 տոկոսը: Այսօր այդ հավատքի հետեւորդները հիմնականում բնակվում են Բեթղեհեմի եւ Ռամալլահի մերձակայքում:

Լիբանանում, որտեղ քրիստոնյաները կազմում են մոտ 1,35 մլն կամ բնակչության 34 տոկոսը («World Christian Database»-ի 2005թ. տվյալներով. 1932թ. նրանք կազմում էին բնակչության 55 տոկոսը), նախկին վարչապետ Ռաֆիկ Յարիրիի սպանությունից հետո երկրում լարվածության աճի եւ սիրիական զորքերի դուրսբերման պատճառով քրիստոնյաների բնակության շրջաններում հաճախացել են ահաբեկչությունները: Շատ մասնագետներ կանխատեսում են Լիբանանի քրիստոնյա ու մուսուլման բնակչության թվաքանակի միջեւ խզման ավելացում:

Սիեւնույն ժամանակ, Եգիպտոսում չի վերանում ղպտիների եւ մուսուլմանների միջեւ լարվածությունը: Եգիպտական ղպտիների գյուղերը հարձակումների են ենթարկվում «Մուսուլման եղբայրներ»-ի գրոհայինների կողմից: Իսլամիստները գտնում են, որ ղպտիները հանդիսանում են իսրայելական հատուկ ծառայությունների հանցակիցներ: Եգիպտոսին վերաբերող՝ ընթացիկ տարվա մայիսին պատրաստված HRW (Human Rights Watch)-ի զեկույցում հայտնվում է, թե երկրում առկա է ղպտիների խտրականության խնդիր. ողջ երկրում նշվել է խտրականության շուրջ 60 փաստ: Դիտվում է Եգիպտոսի ղպտի բնակչության նվազման միտում: Հետազոտողները նշում են հետեւյալ պատճառները. Եգիպտոսի կառավարության կողմից քրիստոնյա բնակչության նկատմամբ խտրականությունը, մուսուլմանական ծայրահեղական խմբավորումների, մասնավորապես՝ «Մուսուլման եղբայրներ»-ի հալածանքները, աշխատանքի տեղավորման դժվարությունները, սեփականության ձեռքբերման հարցում խնդիրները եւ այլն: Համաձայն վերջին տվյալների՝ Եգիպտոսի ղպտի բնակչության թիվը կազմում է 7,6 մլն մարդ, այսինքն՝ երկրի ողջ բնակչության 10 տոկոսը:

Ապաքրիստոնեացումը շոշափեց եւ Սիրիան: Թեեւ երկրում չկա բավարար չափով հավաստի վիճակագրություն, այնուամենայնիվ, շատ մասնագետներ պնդում են, թե քրիստոնյաներն արդեն բնակչության 10 տոկոսից պակաս են կազմում, հիմնականում՝ արտագաղթի (ներառյալ երաշտից ու ջրհեղեղներից տուժած գյուղական շրջաններից արտագաղթը) եւ ծնելիության ցածր մակարդակի պատճառով: Իրաքի պատերազմը բերեց նրան, որ քրիստոնյաների համար երկիրը դարձավ պակաս ապահով: Այսպես, 2004թ. երկու քրիստոնյա սպանվեց մուսուլմանների

կողմից, որոնք նրանց անվանել էին «Բուշի կողմնակիցներ»: Միջադեպի հետեւանքով 2 հազարից ավելի քրիստոնյաներ անցկացրին բողոքի ցույց՝ առաջինը Սիրիայի պատմության մեջ: Հազվադեպ չեն նաեւ վանդալիզմի դեպքերը եկեղեցիներում: Բայց հիմնականում արտագաղթը (թեպետ այն չի կարելի կոչել զանգվածային) բացատրվում է տնտեսական շարժառիթներով:

Մերձավոր Արեւելքի երիտասարդ քրիստոնյաներն ավելի շատ են ձգտում տեղափոխվել արեւմտյան երկրներ: Քրիստոնյա գաղթականներն առավել հեշտ են հարմարվում Մերձավոր Արեւելքից դուրս նոր երկրներում, քանզի նրանք, որպես կանոն, ավելի կրթված են, ավելի ապահովված, նրանց մոտ արտասահմանում բարեկամական կապերն ավելի շատ են: Բացի այդ, նրանք ընտանիքում ավելի քիչ երեխաներ ունեն, քան մուսուլմանները: Օրինակ, Իսրայելում, 2006թ. տվյալներով, մուսուլմանների մոտ ծնելիության մակարդակը 2 անգամ ավելի մեծ է քրիստոնյաների մոտ ծնելիության մակարդակից (4 նորածին յուրաքանչյուր մուսուլման կնոջը): Ընդ որում, Իսրայելի քրիստոնյաների մոտ ծնելիության միջին մակարդակը ամենացածրն է բնակչության մյուս կատեգորիաների համեմատ (2,2 նորածին յուրաքանչյուր կնոջը): Լիբանանում շիաների շրջանում ծնելիության մակարդակը կազմում է 8-9 երեխա յուրաքանչյուր ընտանիքին, սուննի ընտանիքներում միջինը ծնվում է 5-ական երեխա, իսկ քրիստոնյա ընտանիքներում՝ 2-ական երեխա:

Մերձավոր Արեւելքի խոշոր քրիստոնեական համայնքներ (որոնց թիվը գերազանցում է բնակչության 4 տոկոսը) ունեցող երկրներից են Եգիպտոսը, Սիրիան, Լիբանանը: Ակնհայտ է, որ այսօր ապաքրիստոնեացումն այս կամ այն չափով սկսում է շոշափել երկրներ, ուր ավանդաբար խաղաղ գոյակցել են 2 կրոնների ներկայացուցիչները: Այստեղ նկատվում է երկակի միտում: Մի կողմից՝ կարելի է պնդել, թե այդ գործընթացը հանդիսանում է ազգային տնտեսությունների թափանցիկության աստիճանի ավելացման, ինտեգրման եւ գլոբալացման աճի հետեւանք: Քրիստոնյաները հոգեպես առավել մերձ են Արեւմուտքին. անշուշտ, շատերին գրավում են Եվրոպայի ու Ամերիկայի զարգացած երկրների հնարավորությունները, եւ նրանք հաճույքով արտագաղթում են: Հնարավոր է, քրիստոնյաները բնակչության այն խումբն են Մերձավոր Արեւելքում, որն առավել չափով է ենթակա արեւմտականացման, որին մուսուլմանները չեն կարող դրական արձագանքել: Համապատասխանաբար, աճում է միջկրոնական լարվածությունը: Արդյունքում՝ ԱՄՆ Միջազգային կրոնական ազատության հանձնաժողովի նման կառույցը

ստանում է «սիոնաքրիստոնեական էքսպանսիայի» գործիք անվանումը:

Մյուս կողմից՝ հատկանշական է այն փաստը, որ այնտեղ, ուր որպես ընդդիմություն ժողովրդավարական արժեքներին եւ բազմակարծությանը, որոնք բնորոշ են գլոբալացման գործընթացներին, պահպանվել է ուժեղ կենտրոնական իշխանություն (Սիրիան կամ Իրանը), քրիստոնյաներն ավելի պաշտպանված գտնվեցին: Ընդհանուր առմամբ, Մերձավոր Արեւելքում կրոնի նկատմամբ դիտվում են հակասական միտումներ: Այսպես, Սաուդյան Արաբիայում այլ դավանանքների ներկայացուցիչներին կրոնական պաշտամունքի կատարման համար կարող են ձերբակալել, ճիպոտահարել ու երկրից վտարել: Միեւնույն ժամանակ, հարեւան Արաբական Միացյալ Էմիրություններում կան Կրիշնայի եւ Շիվայի տաճարներ, բողոքականների, կաթոլիկների եւ ուղղափառների եկեղեցիներ ու աղոթատներ:

Կարելի է եզրակացնել, որ ֆինանսական, տեղեկատվության տարածման գլոբալ համակարգերի ձեւավորումը, ինչպես նաեւ գլոբալացման շատ այլ ասպեկտներ Մերձավոր Արեւելքում կուղեկցվեն նաեւ հականիտումներով՝ ներառյալ արեւմտյան արժեքներին հակակշիռների ստեղծումը, որոնց թվում եւ տարածաշրջանի ապաքրիստոնեացումը:

[www.iimes.ru](http://www.iimes.ru)

**Մերձավոր Արեւելքի ինստիտուտ**

### **Յուրեր Վեդրին. «ՄԵՆՔ ՇԱՐԺՎՈՒՄ ԵՆՔ ԴԵՊԻ ԲԱԶՄԱԲԵՎԵՌ ԲԱՈՍԱՅԻՆ ԱՇԽԱՐՀ»**

*Միջազգային հարաբերություններով զբաղվող ֆրանսիական քաղաքական գործիչների շարքում **Յուրեր Վեդրին** առանձնակի տեղ է գրավում: Նրա բազմամյա կարիերայի գագաթը եղավ Ֆրանսիայի արտաքին գործերի նախարարի պաշտոնը (1997–2002թթ.): Ավելի վաղ նա աշխատել է նախագահ Միտերանի հետ՝ որպես նրա պաշտոնական ներկայացուցիչ, իսկ հետո՝ աշխատակազմի գլխավոր քարտուղար: Փարիզում Յուրեր Վեդրինի հետ զրուցել է մեր թղթակիցը:*

Հարց – Վերջերս «Gaz de France» եւ «Suez» ընկերությունների միավորումը վրդովեցրել է մի շարք եվրոպական երկրների եւ հովանավորչական մեթոդների վերաբերյալ բանավեճի վերսկսման առիթ դարձել: Մենք կանգնած ենք հովանավորչության վերադարձի շեմի՞ն:

*Պատ.* – Անգամ ներկայիս գլոբալացված տնտեսությունում, երբ շուկայական մեխանիզմները տարածվել են ողջ աշխարհում, ցանկացած պետություն շուկայական թափանցիկությունն այս կամ այն չափով զուգակցում է հովանավորչության տարրերին: Չկա ոչ մի լիակատար փակ երկիր. նույնիսկ Չյուս. Կորեայում ստեղծված են հատուկ տնտեսական գոտիներ: Սակայն ոչ ոք ամբողջովին չի բացում իր տնտեսությունը, քանզի միշտ էլ կան որոշակի ռազմավարական շահեր: Նայեք Միացյալ Նահանգներին. այն շարունակ խոսում է տնտեսական ազատության մասին, քարոզում ազատականության գաղափարներ, բայց նրա մոտ առկա են ազգային բիզնեսի պաշտպանության չափազանց գործունե մեխանիզմներ:

Մենք կարող ենք թվել աշխարհի տարածաշրջաններ, որտեղ տնտեսական ազատությունը եւ թափանցիկությունը խոր արմատներ են գցել: Որպես օրինակ՝ կարելի է բերել Արեւմտյան Եվրոպան: Այստեղ տնտեսության գործունեության ներքին հիմքերը միաժամանակ հանդիսանում են գաղափարախոսության բաղկացուցիչ մաս: Այսպես, եվրոպացիները հավատում են ազատական շուկայական տնտեսությանը եւ, համապատասխանաբար, շուկաների թափանցիկությանը: Միաժամանակ, վերջին տասնամյակների Արեւմտյան Եվրոպան բացասաբար է ընկալում

ազգայնականությունն ու ցանկացած փակվածություն, քանզի այն կարող է հանգեցնել պատերազմի: Անգամ հայրենասիրությունն է հաճախ սկսում զգուշավորությամբ ընկալվել: Բացի այդ, այստեղ ջանում են չսեւեռվել ազգային ինքնության վրա՝ փորձելով բոլոր մարդկանց առաջին հերթին ընդունել որպես համամարդկային արժեքների կրող, այլ ոչ որպես որեւէ առանձին ազգության ներկայացուցիչ:

Անշուշտ, մման եվրոպական մոտեցման մեջ առկա է պարզամտության տարր, քանզի մենք հիանալի տեսնում ենք, որ ԱՄՆ-ը, Ռուսաստանը, Չինաստանը, Հնդկաստանը կամ Բրազիլիան տնտեսական եւ գաղափարախոսական թափանցիկությունը կիրառում են սոսկ որոշակի սահմաններում: Ավելին, նրանք հաճախ ապավինում են հովանավորչությանը կամ, եթե կամենաք, «տնտեսական հայրենասիրությանը»:

Հովանավորչության հարցը չի կարող դիտվել զուտ տեսական առումով: Չէ՞ որ մենք չունենք ընտրության հնարավորություն լիակատար թափանցիկության եւ հովանավորչության կամ կատարյալ ունիվերսալիզմի եւ ազգային ինքնության միջեւ: Անհրաժեշտ է գտնել հաշվեկշիռ երկու բեւեռների միջեւ, ինչը համաշխարհային տնտեսությանը թույլ կտա գործել արդյունավետ, բայց միաժամանակ յուրաքանչյուր երկրի հնարավորություն կտա օրինական միջոցներով պաշտպանել իր հիմնարար շահերը:

*Հարց* – 30 տարի առաջ մոդայիկ էր առանց ազգային պետությունների միասնական եվրոպական միության մասին դատողություններ անել, իսկ այժմ այդ գաղափարի մասին նույնիսկ չեն հիշում:

*Պատ.* – Դա լիակատար պատրանք էր: Եվրոպայում կային մարդիկ (նրանց կարելի է համարել ֆեդերալիստներ), որոնք երազում էին Ամերիկայի Միացյալ Նահանգներին համանման՝ Եվրոպայի Միացյալ Նահանգների մասին: Ոմանք անգամ երազում էին միավորել Ֆրանսիան ու Գերմանիան, թեւէ դա զուտ երեւակայություն էր: Սակայն այսօր մենք վերջնականապես համոզվեցինք, որ այդ կարգի հայացքները չափազանց հեռու են իրականությունից: Նման փաստի ճանաչման մեջ ողբերգական ոչինչ չկա: Եվրոպական երկրները ոչ մի ընդհանուր բան չունեն Միացյալ Նահանգների հետ: Դեռ ամերիկյան առաջին նախագահ Ջորջ Վաշինգտոնն է ասել. «Մենք բոլորս միանման ենք. մենք խոսում ենք նույն լեզվով, մեր կրոնը մեկն է, մենք ունենք նույն իրավունքները, մեր թշնամին մեկն է՝ բրիտանական միապետությունը»: Նմանատիպ ոչինչ չի կարելի ասել շվեդների ու պորտուգալացիների, բրիտանացիների ու հույների

վերաբերյալ: Հատկապես այդ պատճառով Եվրոպայում ազգային պետություններից հրաժարման եւ լիակատար քաղաքական ինտեգրման գաղափարը հենց սկզբից էլ պատրանք էր:

Լիովին հնարավոր է, որ որոշակի պահի այն արդյունավետ էր, որովհետեւ օգնեց Երկրորդ աշխարհամարտից հետո պայքարել ազգայնականության դեմ: Ինքնին նման կարգի հայեցակետերը միանգամայն գրավիչ են, բայց Եվրոպական երկրների բնակիչներն ամենեւին էլ չէին ուզում դրանք կյանքի կոչել: Ի դեպ, այդ գաղափարը չի հայտնվել ոչ մի Եվրոպական պաշտոնական փաստաթղթում, քանզի դրանք մշակողները տվյալ հարցում շատ զգուշավոր էին:

Այն, ինչին ձգտել է Եվրոպան, ժակ Դելորը կոչել է ազգային պետությունների դաշնություն: Ֆրանսիան, ընդ որում, մնում է Ֆրանսիա, Գերմանիան՝ Գերմանիա, Լեհաստանը՝ Լեհաստան եւ այդպես շարունակ, սակայն, միաժամանակ, նրանք կազմում են միություն, որը թույլատրում է շատ ուղղություններով իրականացնել ընդհանուր քաղաքականություն:

*Հարց* – Իսկ ի՞նչ էք Դուք մտածում Եվրոպական միության ընդարձակման մասին:

*Պատ.* – Անձամբ ես հանդես եմ գալիս ընդարձակման սահմանների որոշակիացման օգտին: Որոշակի պահի պետք է կանգ առնել, այլապես ողջ Եվրոպական նախագիծը պարզապես կմեռնի: Ոմանք գտնում են, թե որքան շատ երկիր մտնի ԵՄ, այնքան այն ուժեղ կլինի: Մյուսները պնդում են, որ այսուհետեւ՝ նոր պետությունների միացման դեպքում, Եվրամիությունն այլեւս համասեռ չի լինի, եւ միասնական որոշումներ գտնելը կդառնա ավելի դժվար:

Միասնական Եվրոպայի ապագան միայն քաղաքական ինտեգրման եւ աշխարհագրական սահմանների հարց չէ: Այն նաեւ հարց է, թե աշխարհում Եվրոպական միությունն իրենից ինչ է ներկայացնելու: Այն պարզապես դառնալու է կյանքի բացառիկ հաճելի պայմաններով գոտի՞, թե՞ հանդիսանալու է իրական համաշխարհային ուժ: Եվրոպական որոշ ղեկավարներ կարծում են, թե մեր արժեքների եւ կենսաոճի պաշտպանության համար անպայման պետք է լինել ազդեցիկ ուժ համաշխարհային ասպարեզում, մասնավորապես, Ռուսաստանի, Չինաստանի կամ արաբական երկրների նկատմամբ: Իսկ մյուսներն, ընդհակառակը, վախենում են դրանից՝ համարելով, որ հարկավոր չէ ԵՄ-ը վերածել ուժի առանձին բեւեռի: Եվ մտավախությունները, որոնք նրանք արտահայտում են,

հիմնված են անցյալի փորձի վրա, երբ որոշ եվրոպական երկրներ արդեն փորձել են ուժ ցուցադրել:

*Հարց* – Ի՞նչ եք Դուք սպասում Ամերիկայից նախագահական ընտրություններից հետո:

*Պատ.* – Մենք շարժվում ենք դեպի բազմաբեւեռ քառսային աշխարհ: Միացյալ Նահանգները կշարունակի մնալ հիմնական խաղացող, բայց երեւան կգան եւ այլ ուժեղ մասնակիցներ՝ Ռուսաստան, Չինաստան, Ճապոնիա, Բրազիլիա... Բացի այդ, իրական քաղաքական ուժ կարող է դառնալ միավորված Եվրոպան: Եթե դա տեղի չունենա, ապա Ֆրանսիան, Գերմանիան եւ Մեծ Բրիտանիան կշարունակեն ինքնուրույն խաղալ կարելու քաղաքական դերեր:

Եթե խոսենք կոնկրետ ԱՄՆ-ի մասին, ապա ես չեմ սպասում, որ հաջորդ նախագահի կուրսը հակադիր կլինի ներկայիս, քանզի ամերիկյան քաղաքականությունում միշտ առկա են ժառանգության տարրեր: Ջորջ Բուշն արդեն այժմ անցկացնում է ամենեւին ոչ այն գիծը, ինչը նախկինում էր: Նրա նախագահության առաջին ու երկրորդ ժամկետների միջեւ նկատվում է ակնհայտ տարբերություն: Բացի այդ, խոշոր տերությունները միշտ հակված են միակողմանի գործողությունների: Ընդ որում, այլ բան է, որ նրանք կարող են իրենց բավական հարգալից պահել մյուսների նկատմամբ, այնինչ Բուշն իր կառավարման սկզբում կոշտ քաղաքականություն էր վարում:

Հաջորդ նախագահական ընտրություններից հետո Միացյալ Նահանգները նախկինի պես կհամարի, որ ինքն աշխարհում խաղում է առանձնակի դեր, որ իր վրա դրված է քաղաքակրթական առաքելություն եւ որ իր ինքը պետք է ժողովրդավարության ու ազատական տնտեսության արժեքները մատուցի մնացած բոլորին: Ամերիկան հավատում է իր բացառիկ կոչմանը: Եվ նման կարգի տրամադրվածությունը չի կորչի նոր նախագահի գալու հետ:

Մյուս կողմից՝ անշուշտ, հնարավոր են էական փոփոխություններ: Օրինակ, ինչ վերաբերում է Մերձավոր Արեւելքին, Բուշի վարչակազմի դիրքորոշումը գործնականում լիովին համընկել է Իսրայելի աջերի հայացքներին. ես նկատի ունեմ «Լիկուդ» կուսակցությունը: Նրանք միեւնույն կերպ են մայել պաղեստինյան խնդրին եւ արաբական աշխարհի հետ հարաբերություններին: Նախագահական ընտրություններից հետո մենք կարող ենք սպասել առավել իրատեսական եւ առավել գործնական հայացքների վերադարձի:

*Չարց* – Չինաստանը ցանկացած հարմար պահի ընդգծում է իր գլոբալ քաղաքական հավակնությունների բացակայությունը: Դուք դրան հավատո՞ւմ եք:

*Պատ.* – Նույնիսկ Չինաստանի հարցերով մասնագետներն այդ մասին միասնական կարծիք չունեն: Եթե նայենք պատմական տեսանկյունից, ապա Չինաստանը երբեք չի հավակնել, որպեսզի ցուցաբերի առանձնահատուկ ազդեցություն: Այդ Արեւմուտքն է միշտ ձգտել փոխել շրջակա աշխարհը: Նման մոտեցումը որոշակի չափով ձեւավորվել է քրիստոնեական կրոնում: Գոյություն ունեն երկու դավանանք, որոնք միշտ ձգտել են մարդկանց բերել իրենց հավատքին՝ իսլամն ու քրիստոնեությունը, հատկապես՝ կաթոլիկությունը եւ բողոքականությունը: Հենց կաթոլիկության ու բողոքականության հակումը դեպի միսիոներականություն եղավ գաղութատիրության հիմքը:

Չինաստանի կրոնի եւ պատմության մեջ նման ոչինչ չի դիտվում: Այդ երկիրը երբեք իր առջեւ խնդիր չի դրել գերիշխել աշխարհում: Չինացիներն աշխարհագրական մեծ հայտնագործություններն արել են շատ վաղ, եվրոպացիներից անհամեմատ շուտ՝ օգտագործելով շատ ավելի մեծ նավեր, քան Քրիստափոր Կոլումբոսը: Շատերը գտնում են, որ նրանք նաեւ հասել են Ամերիկա՝ արդեն չխոսելով նրանց կողմից Աֆրիկան ուսումնասիրելու մասին: Բայց մի անգամ կայսրն ասաց, որ հեռավոր ճանապարհորդությունները դադարեցվում են, որովհետեւ չինացիներին դա այլեւս չի հետաքրքրում: Նրանք իրենց համարում էին տիեզերքի կենտրոն: Եթե բարբարոսները ցանկանում էին գնալ նրանց մոտ, ապա նրանք կարող էին դա անել, իսկ եթե չէին ցանկանում, ապա կարող էին այնուհետեւ էլ մնալ խավարի ու տգիտության մեջ: Չինացիներին բոլորովին չի հրապուրել լուսավորիչների դերը:

Ինձ թվում է, այդ հոգեմտածելակերպը հետագայում էլ կդրսեւորվի: Չեն կարծում, թե Չինաստանի պահվածքը կարող է հիշեցնել Եվրոպայի կամ Ամերիկայի գործողությունները: Սակայն երբեք չի կարելի մոռանալ տրամաբանության բնական զարգացման մասին, որը տնտեսապես հզոր տերություններին մղում է այս կամ այն քաղաքական քայլերի: Չինաստանը զարգանում է արտասովոր տեմպերով, այն կարիք ունի նավթի, գազի, օգտակար հանածոների, նոր խողովակաշարերի անցկացման, հզոր առեւտրային նավատորմի: Նրան հարկ է լինելու ապահովել իր տնտեսական անվտանգությունը: Ու եթե անգամ Պեկինն այսօր քաղաքական դաշինքների հետաքրքրություն չի դրսեւորում,

միեւնույն է՝ վաղ թե ուշ կսկսի գործել տնտեսական զարգացման տրամաբանությունը:

Մեծ տերություն դառնալու ճանապարհով ընթացքը կարող է Չինաստանին բավական հեռուն տանել: Եթե ի հայտ գան իրական դժվարություններ, ապա կարող են ծագել պետությունների տարբեր տեսակի միավորումներ, որոնք կցանկանան զսպել Չինաստանի ազդեցությունը, եւ Պեկինին հարկ կլինի դրան հակադարձել: Դեռեւս Ցզյան Ցզեմինի օրոք ընդունվեց «Չինաստանի խաղաղ վերընթաց» կարգախոսը: Այսինքն՝ որդեգրվեց վերելքի ուղի, որը պիտի ընթանա խաղաղ: Սակայն ամենեւին ոչ բոլորն են դրան հավատում: Այնպես որ՝ Պեկինի ապագա քաղաքականության հարցը դեռ մնում է բաց:

**«Россия в глобальной политике»**  
դեկտեմբեր, 2007թ.

## **Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն**

<b>Գագիկ Տեր-Չարությունյան</b>	
<b>ՀՀ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՇՈՒՐՋ</b> .....	<b>1</b>
<b>Ռուբեն Մելքոնյան</b>	
<b>ԹՈՒՐՔԻԱՅԻ ԿՐՈՆԱՓՈԽ ՀԱՅԵՐԻՆ ԱՌՆՉՎՈՂ ՀԱՐՑԵՐ</b> ....	<b>4</b>
<b>Դավիթ Հովհաննիսյան</b>	
<b>2007-Ի ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՆՇԱՆԱԿԱԼԻ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ</b> .....	<b>9</b>
<b>Սեւակ Սարուխանյան</b>	
<b>2007-Ի «ԱՆՏԵՍՎԱԾ» ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ</b> .....	<b>14</b>
<b>Արաքս Փաշայան</b>	
<b>ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՆԻ ԱԿՏԻՎԱՑՈՒՄ</b>	
<b>ՎՐԱՍՏԱՆՈՒՄ</b> .....	<b>18</b>
<b>Սարգիս Հարությունյան</b>	
<b>POST-KOSOVO. ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ</b>	
<b>ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆ</b> .....	<b>23</b>
<b>Սուրեն Մանուկյան</b>	
<b>ՊԱԿԻՍՏԱՆ. ԱՆՈՐՈՇ ՀԵՌԱՆԿԱՐ</b> .....	<b>28</b>
<b>Օ. Սկոպիչ</b>	
<b>ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔԻ ԱՊԱՔՐԻՍՏՈՆԵԱՑՈՒՄԸ</b> .....	<b>34</b>
<b>Յուրեր Վեդրին</b>	
<b>«ՄԵՆՔ ՇԱՐԺՎՈՒՄ ԵՆՔ ԴԵՊԻ</b>	
<b>ԲԱԶՄԱԲԵՎԵՌ ՔԱՈՍԱՅԻՆ ԱՇԽԱՐՀ»</b> .....	<b>39</b>

*Շապիկի վրա պատկերված է  
տեսարան **Սասունից**  
(Արփի գյուղ)*

«ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ», Հայաստանի  
Հանրապետական կուսակցության հրատարակություն  
**Խմբագրական խորհուրդ**  
Երեւան, 375010, Մելիք-Ադամյան 2: Հեռ. 58 04 91, 58 04 83:  
Էլ. փոստ՝ hanrapetakan@hhk.am:  
Հիմնադիր՝ Հայաստանի Հանրապետական կուսակցություն:

Թուղթը՝ օֆսեթ, ֆորմատը՝ 70×108 1/16:  
Պայմանական 3,5 մամուլ: Տպաքանակը՝ 1000:  
Տառատեսակը՝ «Arial Armenian» եւ «Vs Helvetica»:  
Վկայական՝ Օ1Մ 000176:  
Տպագրվել է «Ամարաս» տպարանում: